Վաշինգտոնում 2025 թվականի օգոստոսի 8-ին ձեռք բերված համաձայնության արդյունքներով 2026 թվականին ռազմական էսկալացիան դարձել է գրեթե անհավանական, և բարձրացել է խաղաղության ինստիտուցիոնալացման հավանականությունը: ...Երկարաժամկետ հեռանկարում խաղաղության կառուցման վրա էականորեն բացասաբար ազդող և ռիսկային գործոն են Ադրբեջանի կողմից պետական մակարդակով առաջ տարվող, այսպես կոչված «արևմտյան Ադրբեջանի» և «արևմտյան ադրբեջանցիների վերադարձի» խոսույթներն ու դրանց ուղեկցող գործողությունները: ...Ադրբեջանը Վաշինգտոնյան հռչակագրից հետո ոչ միայն չի նվազեցրել, այլև էականորեն ակտիվացրել է սույն քարոզչությունը, ինչը զգալի ռիսկեր է ստեղծում տարածաշրջանային կայունության, անվտանգության և երկարաժամկետ խաղաղության համար: Մյուս կողմից՝ Ադրբեջանի բյուջեում 2026 թվականի ռազմական հատկացումներն աճել են շուրջ 44 տոկոսով...

ՀՀ արտաքին հետախուզության ծառայություն

Ուրբաթ
30 հունվարի 2026թ.
№ 2 (652)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ: ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Տասը օր շարունակ Սյունիքի մարզը գրեթե շրջափակման մեջ էր՝ միջպետական ճանապարհների անանցանելիության պատճառով

Հունվարի 15-16–ին, մերկասառույցի պատճառով, խոշոր բեռնատարների և կցորդով ավտոմեքենաների համար փակ էր Հալիձոր–Շինուհայր–Շինուհայրի խաչմերուկ ճանապարհահատվածը:

Հունվարի 17-ից՝ ձյան առատ տեղումներ, որ շարունակվեցին մինչև հունվարի 20-ի ժամը 14:00–ը՝ դրանից բխող հետևանքներով:

Մեկ–մեկուկես օրից հետո, ինչպես և սպասվում էր, սկսեցին սաստիկ քամիներ և ձնաբուք Շինուհայրի խաչմերուկ–Հարժիսի խաչմերուկ հատվածում, որը տևեց մինչև հունվարի 24-ը:

Դրա հետևանքով գրեթե անանցանելի դարձավ հանրապետության կենտրոնը Սյունիքին կապող Մ-2 միջպետական ճանապարհը:

Մինչ այդ՝ հունվարի 21-ին, օրվա երկրորդ կեսին, մի քանի ժամ փակ էր Տաթև–Կապան ճանապարհի Տանձատափի խաչմերուկ–Քաշունիի խաչմերուկ հատվածը: Ընդ որում՝ ոչ քամու և ձնաբքի պատճառով...

Արդյունքում՝ հարյուրավոր բեռնատարներ էին կուտակվել Կապանի արևելյան մատույցներում, ինչպես և մարզի հարավային ու հարավարևմտյան հատվածներում. նրանց ընթացքը դադարեցրել էին պարեկային ծառայության աշխատակիցները՝ կանխելով բեռնատարների հայտնվելն անորոշության մեջ:

Ստեղծված իրավիճակում անլուրջ էր Տաթև–Լծեն–Նորավան՝ այսպես կոչված այլընտրանքային ճանապարհի հետ հույս կապելը, քանզի այդ ուղին ևս (բացառությամբ մի քանի ժամի) անանցանելի էր դարձյալ ձնաբքի

Շարունակությունը՝ էջ 2

Ի խորոց սրտի խոսք Աստծո հետ

Լսիր ինձ, Աստվա՛ծ,
Աստվա՛ծդ ամենայն մարմնի ու հոգու,
Ըստ դավանության տիրաշնորհի,
Ըստ սուրբ Հովնանի, բարեմիտ, գթած ու բազումողորմ,
Շնո՛րհ արա ինձ, որ օրհնյալ կամքիդ բարեհաճությամբ՝
Սկզբնավորված աղերսամատյանն
Այս ողբերգության հասնի ավարտին:
...Թող որ անվաստակ չմնամ փոքր իմ այս աշխատանքից,
Ինչպես զրաջան սերմնացան՝ ամուլ, ամբերրի հողի,
Թող չպատահի ինձ հանկարծ՝ երկնել, սակայն չծնել,
Ողբալ՝ չարտասվել, խորհել՝ չհառաչել,
Ամպել՝ չանձրևել, գնալ՝ չհասնել,
Քեզ ձայն տալ, և դու ձայնս չլսես,
Պաղատել, սակայն անտեսված մնալ,
Կողկողել, սակայն դու չողորմես,
Աղաչել քեզ, բայց չշահել ոչինչ,
Ձոհեր մատուցել, բայց չճենճերել,
Քեզ տեսնել, սակայն ձեռնունայն դուրս գալ:
Լսիր ինձ, նախքան ես կդիմեմ քեզ, ո՛վ միակ հզոր.
Մեղքերով ապրած օրերիս չափով
Անվճար թողած տույժն՝ հանցապարտիս
Նոր տանջանքներով վճարել մի՛ տուր:
Փրկի՛ր ինձ, գթա՛ծ, լսի՛ր, ողորմա՛ծ,
Մարդասեր եղիր իմ հանդեպ, ներո՛ղ,
Խնայո՛ղ եղիր, ո՛վ երկայնամիտ,
Պաշտպանի՛ր, հզո՛ր, օգնի՛ր, ապավե՛ն,
Ազատի՛ր, կարո՛ղ, կյանք տուր, կենարա՛ր,
Նորոգի՛ր, վսե՛մ, լուսավորի՛ր, վե՛հ,
Բուժի՛ր, ձեռնհա՛ս, քավի՛ր, անքնի՛ն,
Պարգևի՛ր, առա՛տ, շնորհազարդի՛ր, ամենազեղո՛ւն,
Հաշտվի՛ր, անարա՛տ, ընդունի՛ր, անո՛ւխ,
Մաքրի՛ր պարտքերից, ո՛վ ամենօրհնյալ:

Գրիգոր Նարեկացի
«Մատյան ողբերգության», ԲԱՆ Բ,
հատված

Նոր պահանջ Հայաստանին. Ադրբեջանը հավակնում է երկաթուղու Մեղրիի հատվածին

«Թրամփի ուղու» վերաբերյալ փաստաթղթի ստորագրումը միայն առաջին քայլն է, որին պետք է հաջորդեն մանրամասն բանակցություններ, հայտարարել է Ադրբեջանի նախկին արտգործնախարար Էլմար Մամեդյարովը՝ ադրբեջանական լրատվամիջոցների փոխանցմամբ:

«Ադրբեջանը պարտավոր է լինել այդ բանակցությունների լիիրավ մասնակից երկու ուղղությամբ՝ Հայաստանի կառավարության և ամերիկյան կողմի՝ թե՛ օպերատոր ընկերության, թե՛ ԱՄՆ կառավարության հետ: Քննարկման հիմնական թեման պետք է լինի երկաթուղային հատվածի շահագործման կոնկրետ իրավական և տեխնիկական ռեժիմը», – ասել է նա:

Նրա խոսքով՝ կա մի հիմնարար իրավական խնդիր, որը արմատներ ունի խորհրդային անցյալում. երկաթուղու Մեղրիի հատվածը պատմականորեն կառավարվում էր «Ադրբեջանի երկաթուղիների» կողմից, այլ ոչ թե ազգային ցանցի: Սա հիմք է ստեղծում Ադրբեջանի կողմից այս ենթակառուցվածքի համար հատուկ կարգավիճակի հնարավոր հավակնությունների համար:

«Հաշվի առնելով, որ 1938 թվականին Հայաստանն իր երկաթուղիների վերահսկողությունը փոխանցեց Ռուսաստանին, անհրաժեշտ է իրավական պարզաբանում. արդյո՞ք այս փոխանցումը տարածվել է այն հատվածի վրա, որը փաստացի գտնվում էր Ադրբեջանի իրավասության ներքո: Հետևաբար, կառավարությունը և «Ադրբեջանական երկաթուղիները» պետք է խորհրդակցեն իրենց ռուս գործընկերների հետ՝ այս ակտիվի իրավական կարգավիճակը պարզաբանելու համար», – նշել է Մամեդյարովը:

Ասվածին հավելենք՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան ատյանները դեռևս չեն արձագանքել Ադրբեջանի վերոնշյալ հավակնությանը, որը, Էլմար Մամեդյարովից բացի, արտահայտել են Ադրբեջանի այլ ներկայացուցիչներ ևս:

Գևորգ Փարսյանը՝ տարվա պետական գործիչ Սյունիքի մարզում

«Սյունյաց երկիր» թերթի և «Սյունյաց երկիր. մշակութային» հանդեսի խմբագրակազմը, այդ լրատվամիջոցների գեղարվեստական խորհուրդը, ինչպես և արտահաստիքային թղթակիցները նպատակահարմար են գտել վերականգնել «Տարվա պետական գործիչ Սյունիքի մարզում» անվանակարգով տարեկան մրցանակաբաշխությունը, որը 2010 թվականից հետո մի քանի անգամ իրականացվել ու որոշ հանգամանքների բերումով դադարեցվել է:

Մրցանակաբաշխությունն ունի հստակ նպատակ՝ ընթերցողական լսարանի, հանրության օգնությամբ ի հայտ բերել մարզից պետական ու հանրային կառավարման ոլորտներում ընդգրկված սյունեցի լավագույն գործիչներին՝ Սյունիքի մարզի կենսական շահերից բխող որոշակի չափանիշներ նկատի ունենալով:

Հատկապես հիմա, երբ բախտորոշ ժամանակներ ապրող Սյունիքում արժեքների, նաև երկրամասի հետագա ընթացքի վերաբերյալ տեսլականների որոշակի հակադրություն կա, կարևոր է պետական, հանրային, համայնքային գործիչների պետականամետ և սյունիքանպաստ, ազգային ու քրիստոնեական արժեհամակարգի վրա հիմնված գործունեությունը:

Կարևոր է, որ պետական համակարգում ընդգրկված ամեն մի սյունեցի հստակ դիրքորոշում ունենա երկրամասի հերթական ու դատապարտելի և մերժելի անդամահատման մեր օրերում:

Մանավանդ որ՝ պետական պաշտոնյաների մի մասը՝ առաջնորդվելով բացառապես կոնյուկտուրայով (հանուն իրենց բիզնեսի, հանուն իրենց պաշտոնի, հանուն պետական միջոցներից ստացվող անվաստակ պարգևավճարի), ծափահարումով են արձագանքում Սյունիքի հաշվին թուրք–ադրբեջանցու դարավոր երազանքի իրականացմանը:

Եվ, այդուհանդերձ, պետական գործիչների սյունիքյան փաղանգում շատերն են արժանի հարգանքի ու դրվատանքի՝ հայրենի եզերքին անմնացորդ նվիրվածության համար:

Հիմք ընդունելով վերոնշյալ դիտարկումները, սկզբունքները և հետադարձ հայացք ձգելով 2025-ի սյունիքյան անցուդարձին, ողջամիտ համարվեց՝ 2025-ի արդյունքներով «Տարվա պետական գործիչ Սյունիքի մարզում» ճանաչել և հռչակել Կապան համայնքի ղեկավար Գևորգ Ռազմիկի Փարսյանին:

Նման որոշում ընդունելու համար կարևորվեց ոչ միայն համայնքապետի՝ նրա արդյունավոր գործունեությունն ու բարձր վարկանիշը, այլև մեր պետականության և ինքնիշխանության հարցում Սյունիքի ունեցած բացառիկ դերի վերաբերյալ հստակ և ոչ երկիմաստ դիրքորոշումը, հանուն համայնքային շահի բոլոր կարող ուժերի հետ համագործակցելու ունակությունը, պատեհապաշտությունը և երկդիմությունը մերժելու նրա չբեկանվող վարքը:

Եվ ոչ միայն... Ամենայն հայոց բանաստեղծն էր ասում՝ **«Ոչ մի պաշտոն կամ կոչում չկա, որ հավասար լինի և կարելի լինի համեմատել մարդ կոչումի հետ»:** Ինքը՝ Գևորգ Փարսյանը, նաև այդ բարձունքում է:

Ուրեմն և՝ բարեբանենք պետական գործչի ու սյունեցու այդ տեսակը, որի կարիքը շատ ունի մեր կուրացած աչքերի առջև պատառ–պատառ արվող, պսակազերծվող ու այրիացող հազարամյա մեր տունը՝ Սյունիքը:

Նաև չմոռանանք մեծ հայորդու, մեր սպարապետ Գարեգին Նժդեհի զգուշացում–պատվիրանը՝ **«Ոչ մի տեղ առանց Սյունիքի ու Արցախի. առանց աշխարհագրական Հայաստանի այդ հզոր ողնաշարի մեր ամբողջական հայրենիքը գոյություն ունենալ չի կարող»:** //

Տասը օր շարունակ Սյունիքի մարզը գրեթե շրջափակման մեջ էր՝ միջպետական ճանապարհների անանցանելիության պատճառով

Սկիզբը՝ էջ 1

պատճառով:

Տեղացիները կես կատակ–կես լուրջ ի սկզբանե են ասել՝ Տաթև–Լծեն ճանապարհը հո չե՞ն կառուցել ձմեռային երթևեկության համար:

Այդ օրերին վերստին փորձեցինք «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամից իմանալ՝ ո՞ր կազմակերպությունն է իրականացնում Տաթև–Լծենի ձմեռային պահպանությունը (ո՞վ է ոչ հայտնի այդ կազմակերպության հիմնադիրը), ո՞վ է «Ոսմարի» հիմնադիրը: Պատասխանը տարօրինակ էր՝ դիմեք Google-ին՝ լավ իմանալով, որ այդ հարթակում նման տեղեկատվություն չկա:

Տեղական համապատասխան պաշտոնյաներն էլ ստեղծված իրավիճակում իրենց անմեղսունակությունը թաքցնելու համար, լրատվական որոշ հարթակներից ծիվ–ծիվ էին անում:

Ստեղծված կացության իրական պատճառը Մ-2 մայրուղու՝ Շինուհայրի խաչմերուկ-Հարժիսի խաչմերուկ ճանապարհահատվածի սաստիկ ձնաբուքն էր:

Սակայն ձնաբուքը որպես արդարացնող հանգամանք ներկայացնելը, մեղմ ասած, ազնիվ չէր, եթե ոչ խաբեություն:

Սյունիքի ռելիեֆին ու կլիմայական պայմաններին ծանոթ յուրաքանչյուր ոք տեղյակ է՝ Եռաբլրի սարահարթը դարեր շարունակ հենց այսպիսի ձմեռ է ունեցել և ունենում, ինչի մասին անթիվ- անհամար վկայություններ կան: Ցավալի օրինակներ ունենք, երբ այդ հատվածում ձնաբուքը նույնիսկ մարդկային կյանքեր է խլել: Եվ տարածաշրջանի պատասխանատուները, գոնե վերջին 60-70 տարում, այդ իրավիճակներից դուրս գալու ելքեր էին գտնում. որոշ տեղերում փայտե (և ոչ միայն) ցանկապատների պատնեշ էին տեղադրում, առանձին տեղերում (որտեղ ձյան կուտակումներ չեն լինում)՝ դաշտամիջյան այլընտրանքային ուղիներ բացում... Արդյունքում, ի վերջո, ճանապարհներն անցանելի էին լինում:

Բայց այդ ամենին՝ ավանդաբար, պատրաստվում էին ամռանը, ոչ թե սպասում հունվարին, ինչպես այս օրերին էինք անում, երբ այլևս ամեն ինչ մատնված էր տարերքին:

Ու երբ Եռաբլրի ձնաբուքը հռհռում էր մեր անճարության վրա՝ իրավիճակի պատասխանատուները, ինչպես նշեցինք, արդարացնող սին պատասխաններ էին հորինում և շրջանառության մեջ դնում:

Հայաստանն արտաքին աշխարհին կապող միջպետական գլխավոր ճանապարհը տասը օր շարունակ, փաստորեն, անանցանելի էր: //

Որքա՞ն պարգևավճար են ստացել Սյունիքի անունով ներկայացող իշխանավորները Ամանորի նախօրեին և ինչի՞ համար

Սյունիքում նույնպես զարմացած են հանրապետության իշխանական վերնախավին Ամանորի նախօրեին՝ հույժ գաղտնիության պայմաններում բաժանված պարգևավճարների մասին բացահայտված տեղեկատվությունից:

Ռոբերտ Ղուկասյան

Դավիթ Դանիելյան

Նարեկ Ղահրամանյան

Մարինե Ղազարյան

Արմեն Խաչատրյան

Կարեն Համբարձումյան

Արդկանց հետաքրքրում է՝ ի՞նչ հիմնավորումներով են բարձր աշխատավարձ ստացող, եռամսյակային պարգևավճարներ ստացող, 13-րդ աշխատավարձ ստացող իշխանավորները տարեվերջին միլիոնավոր դրամների հասնող պարգևավճար ստացել:

Մեր հետևորդներին՝ այդ համապատկերի վրա, հետաքրքրում է հատկապես հարցը, թե Սյունիքի անունով ներկայացող վերոնշյալ իշխանավորներից յուրաքանչյուրը որքա՞ն պարգևավճար է ստացել տարեվերջին և ո՞ր մի կատարած աշխատանքի կամ ո՞ր մի ծառայության համար:

Պարգևավճարների այս բումը տեղիք է տվել մեկ այլ հարցի ևս՝ որքա՞ն պարգևավճար է տրվել Սյունիքի մարզպետարանի աշխատակիցներին՝ կոնկրետ անունները նշելով, 2025 թվականի ամբողջ ընթացքում:

Վերջին այդ հարցը, որքան էլ տարօրինակ է, բարձրացրել են Սյունիքի մարզպետարանի մի խումբ աշխատակիցներ:

Սյունիքի անունով ներկայացող այդ իշխանավորները, կարծում ենք, կհարգեն հանրային հետաքրքրությունը և ամենակարճ ժամանակամիջոցում, յուրաքանչյուրն իր մասով, կպատասխանի բարձրացված հարցերին: //

Սամվել Կարապետյանի՝ Հայաստանի քաղաքացիների համար նախատեսված 5 տնտեսական քայլերը

«Մեր ձևով» շարժման համակարգող Նարեկ Կարապետյանը ներկայացրել է Սամվել Կարապետյանի՝ Հայաստանի քաղաքացիների համար նախատեսված 5 տնտեսական քայլերը, որը ներկայացնում ենք ստորև.

- **«Քայլ առաջին.** ապահովել 300 հազար նոր աշխատատեղ մեր երկրի համար:
- **Քայլ երկրորդ.** ազատել փոքր բիզնեսը հարկերից, որպեսզի այն հնարավորություն ունենա կայանալ, դառնալ միջին բիզնես, որից հետո՝ նոր մտնել հարկային դաշտ:
- **Քայլ երրորդ.** նվազեցնել դեղորայքի գները:

Դեղորայքը մեր երկրում բավականին թանկ է համեմատ Վրաստանի, որոշ դեպքերում ավելի քան երկու անգամ: Մենք կապահովենք Վրաստանի պես համակարգ դեղորայքի շուկայում, որպեսզի դեղերի գինը նվազի:

- **Քայլ չորրորդ.** կառուցել մթերման կայաններ:

Մենք կապահովենք մթերման կայաններով, կայուն բերքի վաճառքի կետեր, որի արդյունքում գյուղացին պետք է մտածի միայն բերքն աճեցնելու, ոչ թե վաճառքի մասին:

- **Քայլ հինգերորդ.** կառուցել 20 հազար մատչելի բնակարան երիտասարդ, բազմազավակ ընտանիքների համար:

Սյունիքում հաջողությամբ է ընթանում 2026-ի ձմեռային զորակոչը

Ինչպես արդեն հաղորդել էինք՝ հունվարի 7-ին Սյունիքում՝ Գորիսից, մեկնարկեց 2026 թ. ձմեռային զորակոչը:

Սիսիան

Մեղրի

Իսկ ահա հունվարի 13-ին Կապանի Գարեգին Նժդեհի հուշահամալիրում կայացավ ձմեռային զորակոչի սյունիքյան հերթական հավաքը, և հանդիսավոր արարողությամբ՝ ՀՀ զինված ուժերում ծառայելու մեկնեցին կապանցի ու քաջարանցի նորակոչիկները:

Հունվարի 19-ին Սիսիանի զինվորական կոմիսարիատից ծառայության մեկնեց տարածաշրջանի նորակոչիկների առաջին խումբը:

Կազմակերպված հանդիսավոր միջոցառմանը Սիսիան համայնքի ղեկավար Հովսեփ Առաքելյանը, Սյունիքի մարզի զինվորական կոմիսարիատի զորահավաքային բաժնի պետ, զինվորական կոմիսարի տեղակալ, գնդապետ Մանուել Մարտիրոսյանը, ուրիշներ:

Համայնքապետ Հովսեփ Առաքելյանը շնորհավորել է զորակոչիկներին՝ ՀՀ զինված ուժերում ծառայության մեկնելու կապակցությամբ և մաղթել անփորձանք ծառայություն:

Չնայած սաստիկ ցրտին, սիսիանցիներն իրենց զավակներին բանակ ճանապարհեցին երաժշտությամբ, երգ ու պարով:

Հունվարի 22-ին պարտադիր ժամկետային զինվորական ծառայության է մեկնել 19 զորակոչիկից բաղկացած խումբը՝ Մեղրիից:

Կապան

Զորակոչիկներին խաղաղ, անփորձանք ծառայություն և բարի վերադարձ են մաղթել համայնքի ղեկավար Խաչատուր Անդրեասյանը, տարածաշրջանի հոգևոր հովիվ Տեր Ռաֆայել քահանա Խաչիկյանը, ուրիշներ:

Նորակոչիկներին նվիրվել են աղոթագրքեր և խաչեր՝ խաղաղ ու ապահով ծառայության խորհրդով:

//

«Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության և բարգավաճման» (ԹՐԻՓՓ) նախագծի՝ Հայաստան-ԱՄՆ իրականացման շրջանակի հրապարակման վերաբերյալ համատեղ հայտարարություն

Հետևյալ հայտարարության տեքստը տարածվել է Հայաստանի Հանրապետության և Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունների կողմից:

Հ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը և ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոն այսօր հանդիպում են ունեցել Վաշինգտոնում՝ հրապարակելու «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության և բարգավաճման» նախագծի (ԹՐԻՓՓ) իրականացման շրջանակը: Այս փաստաթուղթը, որը հրապարակված է ստորև, նոր քայլ է 2025 թվականի օգոստոսի 8-ին Սպիտակ տանը ձեռք բերված հանձնառությունների կյանքի կոչման ուղղությամբ՝ Հարավային Կովկասում հարատև խաղաղության գործին նպաստելու համար:

Շրջանակն ուրվագծում է ԹՐԻՓՓ-ի գործարկման կոնկրետ ուղին, որը նախատեսված է Հայաստանի տարածքով անխոչընդոտ, մուտիմոդալ տարանցիկ փոխկապակցվածության հաստատման համար: Կապելով Ադրբեջանի հիմնական մասն իր Նախիջևանի Ինքնավար Հանրապետության հետ և ստեղծելով Տրանս-Կասպյան առևտրային երթուղու կենսական օղակ՝ ակնկալվում է, որ ԹՐԻՓՓ-ը միջազգային և ներպետական փոխկապակցվածության փոխադարձ առավելություններ կստեղծի Հայաստանի Հանրապետության համար:

Արտացոլելով 2025 թվականի օգոստոսի 8-ին նախագահ Թրամփի կողմից հյուրընկալած պատմական Խաղաղության գագաթժողովում հաստատված սկզբունքները՝ ԹՐԻՓՓ-ի իրականացման շրջանակն ընդգծում է ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և փոխադարձության կարևորությունը ԹՐԻՓՓ-ի ընդհանուր հաջողության համար: ԹՐԻՓՓ-ի վերջնական նպատակն է ամրապնդել Հայաստանի և Ադրբեջանի բարգավաճումն ու անվտանգությունը և խթանել ամերիկյան առևտուրն՝ ընդլայնելով տարածաշրջանային առևտուրն ու փոխկապվածությունը, ինչպես նաև ստեղծելով Կենտրոնական Ասիան և Կասպից ծովը Եվրոպային կապող նոր տարանցիկ հնարավորություններ:

ԹՐԻՓՓ-ի իրականացման շրջանակ

Այս փաստաթուղթն ուրվագծում է «Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության և բարգավաճման» (ԹՐԻՓՓ) իրականացման շրջանակը: Այս շրջանակը չի առաջացնում և միտված չէ առաջացնել իրավական հանձնառություններ կամ պարտավորություններ Հայաստանի կամ ԱՄՆ-ի համար:

Ընդհանուր նկարագիր

Օգոստոսի 8-ին Վաշինգտոնում ԱՄՆ նախագահի վկայությամբ Հայաստանի վարչապետը և Ադրբեջանի նախագահը ստորագրեցին համատեղ հռչակագիրը, որը հիմք ստեղծեց ներպետական, երկկողմ և միջազգային տրանսպորտային հաղորդակցությունների բացման համար: ԹՐԻՓՓ-ի իրականացման այս շրջանակն ուրվագծում է ԹՐԻՓՓ-ի հիմնադրման հետագա մանրամասները և առաջ է մղում համատեղ հռչակագրի նպատակները:

ԹՐԻՓՓ-ը միտված է Հայաստանի տարածքում անխոչընդոտ, բազմամոդալ տարանցիկ փոխկապակցվածության ստեղծմանը՝ նպաստելով տարածաշրջանային խաղաղությանը, կայունությանը և ինտեգրմանը՝ պետությունների ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և իրավազորության հարգանքի հիման վրա: Կապելով Ադրբեջանի հիմնական մասն իր Նախիջևանի Ինքնավար Հանրապետության հետ և կենսական օղակ ստեղծելով Տրանս-Կասպյան առևտրային երթուղում՝ ակնկալվում է, որ այն միջազգային և ներպետական փոխկապակցվածության փոխադարձ առավելություններ կստեղծի Հայաստանի Հանրապետության համար:

ԹՐԻՓՓ-ի միջոցով ԱՄՆ-ն ձգտում է.

- օգոստոսի 8-ի համատեղ հռչակագրի հիման վրա ապահովել առաջընթաց դեպի տևական խաղաղություն,
- տարածաշրջանում խաղաղություն, կայունություն և բարգավաճում խթանելու նպատակով բացել հաղորդակցությունը, առևտուրը և փոխկապակցվածությունը Հարավային Կովկասում,
- ընդլայնել շուկայի հասանելիությունը և մատակարարման կենսական շղթաները Տրանս-Կասպյան տարածաշրջանում,

աշխարհին ներկայացնել բարգավաճման միջոցով կառուցվող խաղաղության օրինակ:

ԹՐԻՓՓ-ի միջոցով Հայաստանը ձգտում է.

- ընդլայնել Հայաստանի դերակատարությունը՝ որպես տարածաշրջանային տարանցիկ ու տնտեսական հանգույց,
- ներգրավել օտարերկրյա ներդրումներ Հայաստանի ենթակառուցվածքներում,
- ստեղծել ժամանակակից սահմանային կառավարման և առևտրի դյուրացման ինստիտուցիոնալ կարողություններ,
- ստեղծել կայուն եկամտային հոսքեր և գնման իրավունքներ Հայաստանի համար,
- ամրապնդել ռազմավարական գործընկերությունն ԱՄՆ հետ,
- նպաստել տարածաշրջանային ինտեգրմանն ու կարգավորմանը,
- ընդլայնել Հայաստանի արտահանման ներուժը դեպի նոր շուկաներ:

ԹՐԻՓՓԻ-ի միջոցով ԱՄՆ ակնկալվող օգուտներն են.

- նոր շուկաների բացում ամերիկյան ներդրումների, բիզնեսի ու ապրանքների համար,
- տարածաշրջանում առևտրի համար փոխկապակցվածություն, որը հումք, կարևորագույն հանքանյութեր և հազվագյուտ մետաղներ կբերի ամերիկյան շուկաներ,
- ԱՄՆ, Եվրոպայի և Ասիայի միջև հավելյալ առևտրային ուղիների տարբերակներ ապահովելով, որ մարդիկ և ապրանքները կարողանան տեղաշարժվել՝ անկախ աշխարհաքաղաքական փոփոխություններից:

ԹՐԻՓՓ-ի միջոցով Հայաստանի և Հայաստանի ժողովրդի ակնկալվող օգուտներն են.

- զբաղվածություն. աշխատանքի հնարավորություններ Հայաստանի որակավորված քաղաքացիների համար,
- համատեղ ձեռնարկներ. հնարավորություններ միջազգային և հայաստանյան ընկերությունների միջև,
- տեխնոլոգիայի փոխանցում. կարողությունների զարգացում հայաստանյան ընկերությունների համար,
- վերապատրաստում. հմտությունների զարգացում հայաստանյան աշխատուժի համար,
- վերաներդրում տարածաշրջանում:

ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄՆԵԼՈՒ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի հանձնառությունը

Հայաստանը հանձնառու է ԹՐԻՓՓ-ի՝ որպես իր ազգային շահերին ծառայող ռազմավարական նախաձեռնության հաջողելուն: Հայաստանը մտադիր է իրականացնել հետևյալ քայլերը.

- դրսևորել լիակատար համագործակցություն և աջակցություն ԹՐԻՓՓ զարգացման ընկերությանը,
- ապահովել արդյունավետ համակարգում Հայաստանի կառավարական մարմինների միջև,
- դյուրացնել թույլտվությունների, հաստատումների և կարգավորիչ գործընթացների ժամանակին իրականացումը,
- պահպանել բաց հաղորդակցություն ԱՄՆ գործընկերների հետ,
- աշխատել տարածաշրջանային կարգավորման ուղղությամբ՝ ԹՐԻՓՓ-ի ամբողջական ներուժն իրացնելու նպատակով,
- մշակել տարբերակված ընթացակարգեր մարդկանց, մեքենաների և ապրանքների համար, ներառյալ Ադրբեջանի և իր Նախիջևանի Ինքնավար Հանրապետության միջև երկու ուղղությամբ՝ Հայաստանի օրենքների, կարգավորումների և միջազգային համաձայնագրերի հիման վրա ու միջազգային չափանիշներին համապատասխան:

Հաջողության հասնելու նախադրյալներ

Հայաստանն ու ԱՄՆ-ն ընդունում են, որ ԹՐԻՓՓ-ի հաջողությունը կախված է.

- Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության հետագա ինստիտուցիոնալիզացումից,
- Հայաստան-Թուրքիա ամբողջական կարգավորման առաջընթացից,
- ԱՄՆ կայուն ներգրավվածությունից,
- տարածաշրջանային համագործակցությունից և կայունությունից,
- Հայաստանի ինստիտուտների կարողությունների արդյունավետ զարգացումից:

Ռազմավարական գործընկերություն

ԹՐԻՓՓ-ը Հայաստանի և ԱՄՆ միջև ռազմավարական գործընկերության խորացման դրսևորում է: Հայաստանն այս նախագիծը դիտարկում է որպես ենթակառուցվածքների, տնտեսական զարգացման և տարածաշրջանային ինտեգրման համար երկարատև համագործակցության հիմք:

ԹՐԻՓՓ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆՈՒՄ

ԹՐԻՓՓ-ը պետք է իրականացվի Հայաստանի տարածքում նախատեսված տարանցման ուղիների շրջանակներում՝ ապագայում հստակեցվելիք տեղադիրքերում՝ պահպանելով Հայաստանի լիակատար ինքնիշխանությունը Հայաստանի ինքնիշխան տարածքում ծրագրի ողջ ծածկույթի նկատմամբ: ԹՐԻՓՓ զարգացման ընկերությունն՝ ԱՄՆ վերահսկիչ բաժնեմասով և սկզբունքային հարցերում Հայաստանի վերահսկողությամբ, նպատակ ունի ապահովել ԹՐԻՓՓ ենթակառուցվածքների զարգացումն ու իրականացումը:

Հայաստանը մտադիր է թույլատրել և աջակցել ԹՐԻՓՓ զարգացման ընկերության հիմնմանը: Ակնկալվում է, որ ընկերությունը պատասխանատու կլինի ԹՐԻՓՓ-ի զարգացման համար՝ 49 տարի նախնական ժամկետով նրան տրամադրվող կառուցապատման իրավունքով: Հայաստանը մտադիր է ԱՄՆ-ին առաջարկել ԹՐԻՓՓ զարգացման ընկերության 74% մասնաբաժինը և պահպանել 26% մասնաբաժինը: Ակնկալվում է, որ այս համագործակցությունը կերկարաձգվի ևս 50 տարով՝ Հայաստանի կառավարությանը հավելյալ սեփականության տրամադրմամբ նրա մասնաբաժինը դարձնելով 49%:

Ակնկալվում է, որ ԹՐԻՓՓ զարգացման ընկերության բաժնետերերի փոփոխությունը (ներառյալ մասնաբաժինների վաճառք, նվիրատվություն, միավորում, անջատում, վերակազմակերպում կամ որևէ այլ իրավական կամ փաստացի գործողություն) և վերջնական շահույթի սեփականատերերի փոփոխությունը ենթակա կլինի Հայաստանի և ԱՄՆ կառավարությունների հետ նախօրոք համաձայնեցմանը:

Հայաստանը և ԱՄՆ նախատեսում են միասին աշխատել ԹՐԻՓՓ զարգացման ընկերության կորպորատիվ կառուցվածքը ձևավորելու ուղղությամբ: Ակնկալվում է, որ կառուցվածքը կարտացոլի հետևյալ խնդիրները. 1) Հայաստանի և ԱՄՆ կառավարությունների ներգրավածություն բազմամոդալ տարանցիկ երթուղու շահագործմանը վերաբերող առանձին հատուկ որոշումներում և հարցերում, և 2) ֆինանսական եկամուտ ԱՄՆ-ին՝ իր նախնական ներդրման դիմաց, կամ այլ տնտեսական օգուտներ ԱՄՆ կառավարությանը կամ ԱՄՆ ընկերություններին:

Նախատեսվում է, որ հստակեցված սկզբունքային հարցերի շրջանակներում գտնվող որոշակի զգայուն խնդիրների վերաբերյալ որոշումները կկայացվեն համատեղ՝ Հայաստան-ԱՄՆ ղեկավար կոմիտեի միջոցով:

Ակնկալվում է, որ ԹՐԻՓՓ զարգացման ընկերությունն անմիջականորեն կիրականացնի ԹՐԻՓՓ երկաթգծային ու ճանապարհային նախագծերը և կունենա դուստր ձեռնարկություններ կամ հատուկ նշանակության կազմակերպություններ ԹՐԻՓՓ-ի այլ բաղադրիչների համար:

ԹՐԻՓՓ զարգացման ընկերությունում Հայաստանի մասնաբաժինն արտացոլում է նրա ներդրումը հետևյալում՝

- հողօգտագործման (կառուցապատման) իրավունքներ տարանցիկ երթուղիների շրջանակներում,
- գոյություն ունեցող ենթակառուցվածքային ակտիվներ (ենթակա է հետագա քննարկման),
- կարգավորիչ աջակցություն և թույլտվությունների արագ ընթացակարգեր,
- սահմանային և մաքսային ենթակառուցվածքների հետ կապված ոչ դրամական ներդրումներ,

Շարունակությունը՝ էջ 11

Սամվել Ալեքսանյանը 70 տարեկան է

Սամվել Լազրի Ալեքսանյան, ծնվել է 1956 թ. հունվարի 26-ին Գորիսի շրջանի Հարժիս գյուղում:

Գյուղի դպրոցի 10-րդ դասարանից տեղափոխվել է Գորիսի Ակսել Բակունցի անվան միջնակարգ, որն ավարտել է 1973-ին:

1973-74 ուսումնական տարում Հարժիսի միջնակարգ դպրոցի ավագ ջոկատավարն էր:

1974-ի մայիսին զորակոչվել է բանակ՝ ծառայել Հյուսիսային ռազմածովային նավատորմում՝ Արխանգելսկ քաղաքի մերձակայքում:

1976-81 թթ. սովորել և ավարտել է Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմաաշխարհագրական ֆակուլտետի պատմության և հասարակագիտության բաժինը:

1976-78 թթ., սովորելուն զուգահեռ, աշխատել է Հարժիսի տնտեսության բանվոր, ապա՝ գյուղի մշակույթի տան տնօրեն, 1978-79 թվականներին՝ Շինուհայրի ռետինե կոշիկների գործարանի կոմերիտական կազմակերպության ազատված քարտուղար, 1979-83 թվականներին՝ կոմերիտմիության Գորիսի շրջկոմի 2-րդ քարտուղար (սովորող և ուսանող երիտասարդության հարցերով):

2003 թ. հիմնադրել է «Սյունյաց աշխարհ» ՍՊ ընկերությունը, որն էլ հիմնադրել է մարզային նոր թերթ՝ «Սյունյաց երկիր». անդրանիկ համարը լույս է տեսել 2003 թ. հոկտեմբերի 1-ին:

1983 թ. նշանակվել է Գորիսի շրջանային խորհրդի մշակույթի բաժնի վարիչ՝ աշխատել մոտ հինգ տարի:

1988-96 թթ. Գորիսի շրջանային «Զանգեզուր» թերթի խմբագիրն էր:

1994-1996 թթ. համատեղությամբ կատարել է նաև Սյունիքում ու Վայոց ձորում Արմենպրեսի թղթակցի, Սյունիքի գծով ՀՀ պետնախարար Վազգեն Սարգսյանի Սյունիքի աշխատակազմի լրատվական ծառայության ղեկավարի պարտականությունները:

Այդ տարիներին նրա նախաձեռնությամբ հիմնադրվել և նրա խմբագրությամբ գործել է տարածաշրջանային «Սյունիք» ռադիոկայանը, որի ծրագիրը մինչև 1996 թ. ապրիլ Գորիսից սփռվում էր Վայոց ձորում և Սյունիքում:

Սյունիքի մարզպետարանը կազմավորվելու առաջին օրերից՝ 1996 թ. մարտի 24-ից մինչև 2004 թ. սեպտեմբերի 27-ն աշխատել է մարզպետարանի լրատվության և հանրության հետ կապերի բաժնի վարիչ, ապա՝ Սյունիքի մարզպետի մամուլի քարտուղար:

Մարզպետարանի ստեղծման առաջին տարում նրա անմիջական նախաձեռնությամբ հիմնադրվել են «Սյունիք» մարզային պարբերականը, «Զագեձոր» մարզային հեռուստատեսությունը և «Սյունիքի ղողանջներ» մարզային ռադիոն:

2000 թվականին հիմնադրվել է մարզային նոր պարբերական՝ «Սյունյաց աշխարհ», որը գործել է մինչև 2003 թվականի սեպտեմբեր: Թերթը, որոշ ընդհատումներով, հիմնական պարտականություններին զուգահեռ, խմբագրել է Սամվել Ալեքսանյանը:

2003 թ. հիմնադրել է «Սյունյաց աշխարհ» ՍՊ ընկերությունը, որն էլ հիմնադրել է մարզային նոր թերթ՝ «Սյունյաց երկիր». անդրանիկ համարը լույս է տեսել 2003 թ. հոկտեմբերի 1-ին:

Հիմնադրման օրվանից մինչև հիմա թերթի գլխավոր խմբագիրն է:

2021 թվականի մարտին հիմնադրել է «Սյունյաց երկիր. մշակութային» եռամսյա հանդեսը, որը շարունակում է գործել:

1989 թվականից ՀՀ լրագրողների միության անդամ է:

1976-90 թթ. եղել է Խորհրդային Միության Կոմունիստական կուսակցության շարքերում, որից հետո ոչ մի կուսակցության չի անդամակցել:

Ամուսնացած է, ունի երեք զավակ և տասը թոռ:

Քանիցս գնահատվել է նրա լրագրողական գործունեությունը:

2006 թ. հոկտեմբերի 16-ին արժանացել է ՀՀ ժուռնալիստների միության «Ազդարար» մրցանակին:

2009 թ. «Սյունյաց երկիրը» ճանաչվել է Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության, ՀՀ սփյուռքի նախարարության և Հայաստանի ժուռնալիստների միության կողմից հայտարարված «Աշխարհի հետ՝ մեր ինքնությամբ. Հայաստանը համայն հայության հայրենիքն է» մրցանակաբաշխության դափնեկիր:

2011 թ. հունիսի 30-ին պարգևատրվել է Սյունիքի մարզպետարանի «Ակսել Բակունց» հուշամեդալով:

2013 թ. պարգևատրվել է Հայաստանի ժուռնալիստների միության «Հավատարիմ մասնագիտությանը» մեդալով:

2016 թ. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից պարգևատրվել է «Գարեգին Նժդեհ» մեդալով:

ՀՀ նախագահի 2016 թ. սեպտեմբերի 17-ի հրամանագրով Սամվել Ալեքսանյանին շնորհվել է Հայաստանի Հանրապետության վաստակավոր լրագրողի կոչում:

2017 թ. պարգևատրվել է ՀՀ մշակույթի նախարարության «Գրիգոր Նարեկացի» մեդալով:

2025 թ. արժանացել է «Честный взгляд» միջազգային մրցանակի դափնեկրի կոչման:

2025 թ. արժանացել է «Голос Евразии: вдохновлять» միջազգային մրցանակի դափնեկրի կոչման: //

Սյունյաց աշխարհի հոգևորի ու կեցության բացառիկ մատենագիրը

ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Բանաստեղծ



Իմ գրական ճանապարհին երբեմն-երբեմն անդրադարձել եմ համամարդկային արժեհամակարգ որդեգրած, անուրանալի վաստակ ունեցող, ինձ հոգեհարազատ որոշ անհատների կյանքին ու գործունեությանը և շարադրածս խոսքերի մեջ, կարելի է ասել, կարողացել եմ հստակորեն ներկայացնել նաև անկրկնելի ինքնատիպության կնիք կրող նրանց մարդկային որակները:

Թող ամպագոռգոռ չհնչի, եթե ասեմ, որ ինքս ինձ համար, առանց բարձրաձայնելու, գրված խոսքերը միշտ համարել եմ այդ անհատների կյանքին ու գործունեությանը նվիրված՝ յուրաքանչյուրի կեցության կերպն ու մարդկային տեսակն ամփոփ կերպով ներկայացնող, խորախորհուրդ ճշգրտությամբ վրձնահարված գոյաբանական դիմանկարներ: Եվ նրանցից ինչ-որ մեկի գործունեության ու կերպարի մասին որևէ նոր բան ավելացնելու ցանկության կամ պահանջվածության զգացում երբեք չեմ ունեցել:

Տարիներ առաջ Սամվել Ալեքսանյանի լրագրողական տաղանդին և խմբագրական ունակություններին էլ անդրադարձել էի իմ՝ «Լրագրությունը նրա համար հավատամք է ու կենսակերպ» վերնագրված խոսքում: Այդ հոդվածում կարողացել էի նրա օժտվածության բացառիկ որակները մեկտեղած, նրա գործունեությունն արժևորած գնահատանքի ամփոփ ու հստակ խոսք շարադրել և համոզված էի, որ ինչպես մնացած անհատականությունների՝ նրա մասին գրածս խոսքի մեջ էլ ամեն ինչ ասված է:

Սակայն Սամվել Ալեքսանյանի պարագայում՝ այսօր ստիպված եմ այդ օրինաչափությունը խախտել: Պատճառն այն է, որ մարդկային հնարավորությունների սահմանները կասկածի տակ դնող, գոյաբանական առեղծվածային տեսակ մարմնավորող այս մարդը 60-ի սահմանագիծը հատելուց մի քանի տարի հետո, երբ շատերն այդ տարիքում ձգտում են վաստակած հանգստի, երիտասարդական ավյունով նոր բնույթի լրատվական գործունեություն սկսեց ծավալել «Սյունյաց երկիր» թերթի հրատարակմանը զուգահեռ՝ հիմնելով «Սյունյաց երկիր. մշակութային» պարբերականը, որի անխափան գործունեության հինգերորդ տարին է արդեն լրացել: Շտապեմ ասել, որ անգամ երիտասարդ տարիքում այդպիսի լրատվամիջոց հիմնելու քաջություն ունենալու համար այդ նախաձեռնությունն իրականացնող խմբագիրը՝ նվազագույնը պիտի մշակութաբան լինի: Իսկ մեր դեպքում՝ պիտի հիշեմ ու հիշեցնեմ, որ Սամվել Ալեքսանյանն ընդամենը պատմագիտական կրթություն է ստացել:

Հարկ եմ համարում հստակեցնել, որ մշակույթ ասվածն ընդհանուր առմամբ բավականին ընդգրկուն հասկացություն է. այն ժողովուրդների ստեղծած նյութական և հոգևոր արժեքների ամբողջությունն է, որը ներառում է գիտությունը, արվեստն ու արհեստը և, կարելի է անգամ միանշանակ ասել, մարդու կողմից արարված ամեն ինչ:

Սակայն առօրեական իրականության մեջ մշակույթ բառը լսելով՝ մեր ընկալումները հիմնականում սևեռվում են արվեստի ներքոնշյալ ճյուղավորումների՝ գրականության, ճարտարապետության, քանդակագործության, գեղանկարչության, երաժշտության, պարարվեստի, թատրոնի ու կինոյի վրա:

Յուրաքանչյուր պատմական ժամանակաշրջան, անտարակույս, իր քաղաքակրթական դրոշմն է դնում մշակութային արժեքների ստեղծման վրա՝ նրա համար կամա թե ակամա նաև գաղափարական հարթակ դառնալով:

Կարելի է ասել, որ մշակույթն ու պատմությունն իրարից անբաժան, նախապատմական ժամանակներից միասին ճանապարհ ընկած, ինչ-որ առումով՝ նաև միմյանցով պայմանավորված հասկացություններ են:

Բայց միմյանց հետ նման աղերսներ ունենալու հանգամանքը բավարար պայման լինելուց բավականին հեռու է, որպեսզի միայն պատմագիտական կրթություն ստացած անհատը մշակութային հանդեսի խմբագիր դառնա և կարողանա արվեստի տարատեսակ ճյուղեր ներկայացնող մշակութային հիմնավոր համարներ թողարկել ու իրենց գիտակցական կյանքն ամբողջովին արվեստի այդ ոլորտներին նվիրած մասնագետների հիացական գնահատականներին արժանանալ:

Երբ նման գործին ձեռք է մեկնում մշակութաբանական կրթություն չունեցող անհատը, ապա նա՝ լրատվության անցած ճանապարհի որոշակի փորձառությունից զատ, պիտի ունենա պատանեկան ավյունով անընդհատ սովորելու միտված էություն, տարաբնույթ տեղեկատվությունները, որով հեղեղված է մեր իրականությունը, կասկածի տակ դնող, պրպտուն և որոնողական խառնվածք ու նաև իրեն մինչ այդ անծանոթ թեմաների մեջ խորանալու և ճշմարտությունը վեր հանելու՝ հետազոտողի համառ ու համարձակ կեցվածք պիտի ունենա: Եվ օժտված պիտի լինի որևէ խնդրի շուրջ տարակարծություններ ունեցող, սակայն տվյալ խնդրից բավականին իմացություն ամբարած բոլոր գիտակ մարդկանց կարծիքները համբերությամբ լսելու ունակությամբ ու դրանք իր ներաշխարհում զտելու կարողությամբ նաև պիտի օժտված լինի: *Ասել է թե՝ Երկնավորը նրա ներաշխարհում արժևորման նշաձող նաև պիտի դրած լինի:*

Սամվել Ալեքսանյանին շատ լավ ճանաչելով՝ կարող եմ հայտարարել, որ հիշյալ որակ-

Շարունակությունը՝ էջ 8

ԱՄՍԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԸ 70 ՏԱՐԵԿԱՆ Է

Սամվել Ալեքսանյանին



Մեծարգո Սամվել Ալեքսանյան

Սիրով շնորհավորում եմ Ձեր ծննդյան 70-ամյակը:

Ինչպես առաջ, այնպես և հիմա ծննդյան և շնորհանդեսային գրավոր ու բանավոր խոսքեր ես հազվադեպ եմ գրում կամ ասում: Հակառակ կյանքի ծանր հոգսերին և իմ շատ խիտ զբաղվածությանը, գրում եմ՝ գրավոր շնորհավորելու Ձեր հոբելյանը:

Ձեզ ճանաչում եմ արդեն քանի՞ տարի: Այդքան ժամանակ գրական հոդվածներով թղթակցել եմ Ձեր թերթին, քիչ չեն եղել նաև առանձին համարների հետ կապված նախնական քննարկումները: Սա եղել է ստեղծագործական աշխատանք. թե՛ այդ ընթացքում, թե՛ թերթի համարները տպագրվելուց հետո ես ճանաչել եմ Ձեզ և Ձեր միջոցով նաև խմբագրության աշխատակիցներին:

Ձեր թերթի բացառիկ համարներն ինձ հիացրել են, որովհետև տվյալ նյութը լուսաբանելու նպատակով ձգտել եք համակողմանի, գրեթե հանրագիտական ամբողջության: Սա հեշտ չէ և նշանակում է գործ ունենալ ոչ միայն բազմաթիվ հեղինակների հետ, այլև թանգարանների ու արխիվների: Լավ են լուծվում նաև նկարների, լուսանկարների, ընդհանուր ձևավորման հարցը:

Այս տեսակետից մարզային թերթերի մեջ «Սյունյաց երկիր»–ը էականորեն տարբերվում է: Բացառիկներից առանձին համարներ ես պահում եմ իմ գրադարանում:

Թերթում տրոփում է Սյունյաց աշխարհի ոգին՝ կենդանի թրթիռներով ներկայացնելով և՛ պատմական անցյալը, և՛ ստեղծվող ու շարունակվող ներկան, և՛ տարածաշրջանի հիմնախնդիրները, և՛ դրանց լուծմանը նվիրված մարդկանց կերպարները: Այս տեսակետից թերթը միշտ եղել է դիրքերում և երբեք չի դարձել դասալիք:

Ահա այս ամենն ինձ բարոյական իրավունք են տալիս չլռելու, սրտաբաց ձեռքս մեկնելու Ձեզ և, միանալով բոլոր բարեմաղթանքներին, ուղիղ նայել Ձեզ ու ասել՝ շնորհավոր ծննդյանդ 70-ամյակը, մեծարգո Սամվել Ալեքսանյան:

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ

Գետիկ Բաղդասարյան. «Կցանկանայի՝ Հայաստանի ամեն մի մարզում Սամվել Ալեքսանյանի նման մեկը լիներ»

Սամվել Ալեքսանյանին ճանաչում եմ 2000-ականների սկզբից...

2004-ին «Սյունյաց երկիրը» հատուկ համար էր նվիրում Համո Սահյանին...

Այդ ժամանակ նաև Սիսիանի Սիսակ Նահապետի անվան հրապարակում մեծ քնարերգուի՝ իմ կերտած հուշարձանն էր տեղադրվում...

Մեր առաջին շփումներն այդ առիթով էին: Հետո՝ 2006-ին, ծավալուն հարցազրույց «Սյունյաց երկրում», ավելի ուշ՝ ակտիվ համագործակցություն Համո Սահյանին նվիրված և՛ երկու գեղեցիկ համարը, քանդակագործությանը, գեղանկարչությանը, մանրանկարչությանը նվիրված հատուկ թողարկումները պատրաստելիս:

Տարիների ընթացքում ես նրան ճանաչեցի, բացահայտեցի...

Ինձ համար շատ հարազատ մարդ է Սամվել Ալեքսանյանը: Ինչո՞ւ: Որովհետև հետևողականորեն ուսումնասիրում է Սյունյաց աշխարհի արվեստը. մինչ այդ ոչ ոք նման պահանջված և պատասխանատու գործով չէր զբաղվել, և ուսումնասիրելով՝ իր մեկնաբանություններն է ներկայացնում ամեն մի ոլորտի վերաբերյալ:

Հիրավի, հանրությանը պետք է, որ լուսաբանվի, գնահատվի, մեկնաբանվի, թե ինչ է արել իր համերկրացի բանաստեղծը, քանդակագործը, նկարիչը... Եվ պետք է մեկ նվիրյալ, որ այդ ամենը կարողանա կազմակերպել:

Սյունիքում այդ մեկը, այդ նվիրյալը Սամվել Ալեքսանյանն է, և նրա գործունեությունն անհրաժեշտ է ազգի զարգացմանը, արվեստի զարգացմանը:

Նրան ամեն կողմից օգնություն է պետք, որպեսզի կարողանա այդ առաքելությունը շարունակել և անխոչընդոտ կատարել, չէ՞ որ նրա արած–դրածը բոլորիս համար է, մեր հարստությունն է: Սամվել Ալեքսանյանի խմբագրած պարբերականների, նրա հեղինակած հոդվածների միջոցով շատ–շատ նորություններ ենք իմանում: Նրա միջոցով ենք ծանոթանում արվեստի բազմաթիվ ստեղծագործությունների, ճանաչում նրանց հեղինակներին, պատկերացում կազմում այդ ստեղծագործությունների գեղարվեստական արժեքի մասին:

Սյունիքի ամեն մի տարածքում եղել են նշանավոր հայորդիներ՝ Սուրբ Հովհան Որոտնեցի, Սուրբ Գրիգոր Տաթևացի, Ակսել Բակունց, Համո Սահյան, Սերո Խանզադյան, Նիկողայոս Ադոնց, Գուսան Աշոտ, Մորուս Հասրաթյան...

Սամվել Ալեքսանյանը կարողանում է նորովի բացահայտել նրանց՝ իրենց թողած մեծ ժառանգությամբ:

Սովորական մարդը կարող է շատ բան չիմանալ նրանց մասին, բայց ծանոթանալով «Սյունյաց երկիր» և «Սյունյաց երկիր. մշակութային» պարբերականներին՝ իր համար նորություններ է գտնում:

Նույնը՝ քանդակագործների, նկարիչների մասով, որոնց (գրեթե բոլորին) ճանաչում էի, բայց չգիտեի, որ նրանք Սյունիքից են: Եվ կրկնակի ծանոթություն ունեցա այդ արվեստագետների հետ: Նաև հպարտություն ապրեցի, որ Սյունիքն այդքան քանդակագործներ, նկարիչներ, մանրանկարիչներ է տվել:

Ու այդ ամենը ներկայացնում է Սամվել Ալեքսանյանը: Կարողանում է նաև արվեստի հանդեպ ունեցած իր սերը փոխանցել ընթերցողին:

Խոստովանենք՝ այսօր այդպիսի մարդիկ են պետք՝ արվեստը հասկացող, արվեստը բացահայտել կարողացող, ներկայացնել կարողացող, հասկացնել ու գնահատել կարողացող:

Հետաքրքիր մի հանգամանք էլ՝ Սամվել Ալեքսանյանը միայն սովորական ընթերցողին, սովորական մարդկանց չէ, որ օգնում է: Նա օգնում է ուսանողին, մանկավարժին, դասախոսին, օգնում է արվեստագետին: Արվեստագետը կարողանում է ինքն իրեն տեսնել, ինքն իր հետ առերեսվել, հավելյալ լիցքեր ստանալ ու նոր գործեր ստեղծել:

Ծանոթ եմ Կոմիտասին, Արամ Խաչատրյանին, Սյունիքի երաժշտական աշխարհին, բեմարվեստին, քրիստոնեական մեր սրբավայրերին նվիրված թերթային հրաշալի համարներին... Հիմա այնքան անճաշակությամբ է լցված ամեն ինչ, որ մարդ երբեմն չգիտի՝ ինչ անել: Մինչդեռ ցանկանում ենք պարզ, զուլալ բաների մասին խոսել, որոնցով, խոստովանենք, լեցուն են Սամվել Ալեքսանյանի խմբագրած պարբերականները:

Հնարավոր չէ առանց հուզմունքի և հպարտության ծանոթանալ «Սյունյաց երկրի» այն համար–հուշամատյանին, որով ներկայացվում են Արցախյան 44-օրյա պատերազմում նահատակված սյունեցի 228 քաջերը...

Մենք պիտի անընդհատ խոսենք մեր հերոս տղերքի մասին, երկիրը պահած և պահող զինվորականների մասին: Չմոռանանք՝ նրանց շնորհիվ ենք ապրում:

Պատկերացնո՞ւմ եք՝ Նժդեհը չլիներ, Մոնթեն չլիներ, մյուս հերոսները չլինեին. որքան աղքատ կլինեինք:

Եվ Սամվել Ալեքսանյանի խմբագրած թերթերով նորովի ենք հաղորդակցվում նրանց հետ ու նրանցից ոգի և ուժ առնում:

Կցանկանայի՝ Հայաստանի ամեն մի մարզում Սամվել Ալեքսանյանի նման մեկը լիներ. արվեստի ոլորտը մեզանում ավելի հարուստ և ամբողջական կլիներ:

Գործ կատարող մարդ է, քիչ խոսող, բայց արարող և արարումի այդ ճանապարհին չհոգնող, չնահանջող:

Արվեստի ոլորտին առնչվող այդ գործերում... եթե չգիտի՝ պարզում է, հարցնում, որոնում. դա մարդկային գեղեցիկ հատկանիշ է:

Սամվել Ալեքսանյանին ցանկանում եմ առողջություն, նույն ռիթմով իր առաքելությունը, իր ճանապարհը շարունակելու կամք և վճռականություն:

Թող շարունակի բոլորիս ուրախացնել, բոլորիս կրթել...

Տեղյակ եմ՝ որքան դժվարությունների է բախվել ու բախվում, որքան փորձությունների միջով է անցել ու անցնում, ու երբեք այդ մասին չենք զրուցել, նա ոչ միայն հաղթահարել ու հաղթահարում է այդ ամենը, այլև մնացել և մնում իր սկզբունքներին հավատարիմ, իր ստեղծագործական հունի մեջ:

Սամվել Ալեքսանյանին իմ ընկերն եմ համարում:

Շնորհավոր հոբելյանդ, հարգելի ընկեր ու բարեկամ:

ԳԵՏԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՆԿԱՐԻՉ, ՊՐՈՖԵՍՈՐ

Արժանին պիտի մատուցել «Սյունյաց երկիր» թերթի և «Սյունյաց երկիր. մշակութային» պարբերականի թողարկումների տարեգրության մեջ իրենց անուրանալի ավանդը ներդրած խմբագրակազմի աշխատակիցներին, ովքեր տարիներ ի վեր կարողացել են խմբագիր Սամվել Ալեքսանյանի մոլեռանդ գործունեության ռիթմին համընթաց նվիրումով աշխատել:

Յուրաքանչյուր հերթական համարի խմբագրական նյութերի հավաքագրման «հոսքագիծը» ամենավերին՝ պրկված աշխատանքային ռեժիմի մեջ դնելու Սամվել Ալեքսանյանի անձնուրաց նվիրվածությունն ու ակնածալի պատասխանատվության զգացմամբ թեմային վերաբերող նյութեր հայթայթելու որոնողական համառությունը բնութագրող ածական դժվարանում եմ գտնել:

Տիգրան Գրիգորյան

Սամվել Ալեքսանյան. յոթ տասնամյակ՝ խոսքի և սկզբունքի մեջ

Սամվել Ալեքսանյանի ծննդյան յոթանասունամյակը պարզապես հոբելյանական տարեթիվ չէ: Այն առիթ է՝ ջերմորեն շնորհավորելու մի մարդու, ում անցած ճանապարհը վաղուց վերածվել է ծառայության՝ Սյունիքի, նրա պատմության, մշակույթի և հոգևոր ինքնության հանդեպ:

Յոթ տասնամյակ, որոնց մեջ խտացած է ոչ միայն անձնական կենսագրություն, այլև մի ամբողջ երկրամասի ժամանակագրություն:

Կան մարդիկ, որոնց կենսագրությունը հնարավոր չէ շարադրել միայն թվականներով ու պաշտոնական տվյալներով: Նրանց կենսագրությունը գրվում է գործով, արժեքային ընտրությամբ, դիմակայությամբ և պատասխանատվությամբ: Սամվել Ալեքսանյանն այդպիսի մարդկանցից է: Նրա կյանքի ու գործունեության առանցքը տարիներ շարունակ եղել է «Սյունյաց երկիր» թերթը, սակայն ոչ որպես աշխատանք, այլ որպես գործ՝ գիտակցված, շարունակական և ինքնաբավ առաքելություն:

Ինքը՝ Սամվել Ալեքսանյանը, տարիներ առաջ հստակ ձևակերպել է իր խմբագրական հավատամքը. «Լինել ժամանակի ճշմարիտ վավերագրողը. ահա «Սյունյաց երկրի» գլխավոր առաքելությունը»:

Այս միտքը կարգախոս չէ, այլ կենսական սկզբունք, որը մշտապես առաջնորդել է թե՛ խմբագրին, թե՛ նրա ղեկավարած պարբերականը:

Որպես գրի ու գրչի մարդ մշտապես կապված լինելով «Սյունյաց երկրի» հետ՝ այս պարբերականը միշտ դիտել եմ ոչ միայն որպես լրատվամիջոց, այլև որպես մշակութային ինստիտուտ: Այն ունի իր հաստատուն դեմքը, իր լեզուն, իր մտածողությունը, որոնք ձևավորվել են Սամվել Ալեքսանյանի խմբագրական խստապահանջության, սկզբունքայնության և արժեքային հստակության շնորհիվ:

«Սյունյաց երկիրը» վաղուց է դուրս եկել մարզային սովորական լրատվամիջոցի սահմաններից: Տասնամյակներ շարունակ այն մնացել է Սյունիքի կյանքի ամենահետևողական ու ամենաերկարակյաց վավերագիրը՝ լուսաբանելով մարզի անցուդարձը ոչ դրվագաբար, այլ ամբողջական տեսլականով: Սոցիալական խնդիրներից մինչև հոգևոր արժեքներ, առօրյա իրադարձություններից մինչև պատմական հիշողություն. թերթի էջերում Սյունիքը ներկայանում է իր ամբողջականությամբ:

Սամվել Ալեքսանյանի խմբագրական գործունեության առանձնահատուկ և, կարելի է ասել, եզակի էջերն են «Սյունյաց երկրի» թեմատիկ կամ բացառիկ համարները: Դրանք տարիների ընթացքում ձևավորել են մի ամբողջ մշակութային տարեգրություն՝ նվիրված հայ մտքի, պատմության և մշակույթի մեծերին, Սյունիքի քաղաքներին ու համայնքներին, սրբավայրերին, ինչպես նաև մեր ժամանակի ցավալի ու հերոսական իրադարձություններին: Այդ համարները՝ նյութերի ընտրությամբ, կառուցվածքային ամբողջականությամբ և նպատակային մտածվածությամբ վաղուց դուրս են եկել սովորական լրագրության շրջանակներից:

Շատ դեպքերում «Սյունյաց երկրի» էջերում է առաջին անգամ ամբողջական կերպով ներկայացվել այն, ինչ տարիներով դուրս էր մնացել հանրային ուշադրությունից: Այս աշխատանքը լրագրությունից դուրս է գալիս և դառնում գիտական ծառայություն հայագիտությանը: Այդպիսի նախաձեռնությունները պատահական չեն: Դրանք ծնվում են խմբագրի գիտակցությունից, որ թերթը պետք է ծառայի ոչ միայն օրվա տեղեկատվությանը, այլ նաև պատմական հիշողությանը:

Սամվել Ալեքսանյանի խմբագրական ձեռագիրը միշտ ճանաչելի է: Նա երբեք չի ընտրել հեշտ ճանապարհը: Նրա համար «ասելն առավելը» եղել է սկզբունք, նույնիսկ այն դեպքում, երբ դա բերում է ճնշումների, հակամարտությունների, փորձությունների: Բայց հենց այդ անշեղությունն է, որ «Սյունյաց երկիրը» դարձրել է վստահելի, սպասված, հեղինակավոր: Այս թերթը չի շեղվել իր առաքելությունից, որովհետև խմբագիրն ինքը երբեք չի շեղվել:

Սամվել Ալեքսանյանի լրագրությունը երբեք չի եղել պատեհապաշտ: Այն եղել է դիրքորոշում: Իսկ դիրքորոշումը պահանջում է ոչ միայն մասնագիտական կարողություն, այլև բարոյական խիզախություն: Այդ խիզախությունն է, որ տարիների ընթացքում «Սյունյաց երկիր»-ը պահել է որպես ազատ խոսքի ամբիոն Սյունիքում: Այս անշեղությունը ոչ միայն խմբագրական ռազմավարություն է, այլև Սամվել Ալեքսանյանի բնավորության արտահայտությունը:

Նրա մարդկային նկարագիրն է, որ այս ամենին հաղորդում է ներքին ուժ ու շարունակականություն: Նրա հետ յուրաքանչյուր շփում հարստացնում է՝ մտածողությամբ, վերաբերմունքով, աշխատանքի հանդեպ պատասխանատվությամբ:

Դժվարությունները նրա ճանապարհին չեն դառնում արգելք, այլ վերածվում են ստեղծման նոր հանգրվանների, խոչընդոտների առաջ նա որոնում նոր լուծումներ ու ձևաչափեր, իսկ լռեցնելու փորձերի պայմաններում աշխատում է առավել խորքային ու որակյալ: Սամվել Ալեքսանյանն այն մարդկանցից է, ովքեր հաղթում են ստեղծելով: Նրա օրինակն ուսանելի է հենց այս իմաստով՝ արժեքները պաշտպանվում են ոչ միայն խոսքով, այլև ամենօրյա հետևողական աշխատանքով: Այդ է պատճառը, որ նրա շուրջ միշտ ձևավորվել է մտավոր, ստեղծագործ մարդկանց միջավայր, իսկ «Սյունյաց երկիրը» դարձել է հավաքման վայր նրանց համար, ովքեր հավատում են գործին և արժեքին:

Այս յոթ տասնամյակի ճանապարհը վկայում է մի պարզ ճշմարտություն. Սամվել Ալեքսանյանը պատկանում է այն հազվագյուտ մտավորականների շարքին, որոնց գործը

Նրա համար խոսքն արժեք է, իսկ սկզբունքը՝ պարտավորություն: Պատահական չէ նրա ձևակերպումը. «Իշխանավորները կգան ու կգնան, իսկ ճշմարիտ խոսքը կմնա ու կփոխանցվի գալիք սերունդներին»: Այս համոզմունքն է տարիներ շարունակ ձևավորել «Սյունյաց երկրի» դիմագիծը՝ զերծ պահելով այն ժամանակավոր շահերից ու իրավիճակային ճնշումներից:

Շարունակությունը՝ էջ 9

Ձեր պատվավոր 70-րդ տարեդարձը շնորհավոր, Սյունյաց աշխարհի պետականամե՛տ զավակ Սամվել Սյունեցի (Սամվել Լազրի Ալեքսանյան)

Ա նպարտելի դրոշակ ունեցող Սյունյաց աշխարհը Ձեր արյան, սրտի և ուղեղի մեջ կրող Սամվել Սյունեցի

20-րդ դարավերջի 90-ականների սկզբին Դուք, Ձեր և հերոս հայ քաջորդիների անձնազոհության, նվիրումի և խիզախության շնորհիվ, վերականգնեցիք հայոց անկախությունը, և անկախության օրինյալ զարթոնքի ուժով՝ վերականգնեցիք դարերով կորստյան մատնված հայոց փառքի դափնիները՝ հայ ժողովրդի համար ապահովելով ազգային դիմադրության ոգի և միջազգային արդի քաղաքականության դժվարին դերակատարումներին մասնակցելու հաստատուն ճանապարհ:

Ձեր չերկրորդվող գրչով Դուք կերտում եք հայրենիք պահող զինվորի, հոգատար բժշկի, իր հայրենակցի տունը կառուցող շինարարի, պետության ճակատագրով մտահոգ պաշտոնյայի և, պարզապես, հայոց հայրենիքի հայրենատեր քաղաքացու կերպարները:

Ձեր փորձառու գրիչը չջարդվող վահան է՝ միշտ մարտնչելու համար մեր սուրբ հայրենիքի բոլոր թշնամիների դեմ՝ պաշտպանելով Հայաստանն ու հայ ժողովրդին:

Հայերիս կողմից ի սկզբանե սրբացված մտավորականի Ձեր վաստակած կոչումով և Ձեր անբասիր վարքագծով՝ հայոց հայրենիքի վաղվա օրվա նկատմամբ մեծ հավատ ու վստահություն եք հաղորդում ներկա և եկող սերունդներին՝ ապագայի Հայաստանի ավելի հզոր քաղաքացուն:

Այսօր Դուք Սյունյաց մարտունակ ոգու կենդանի վկայությունն եք, սյունեցու և Սյունիքի ուժն ու զորությունը կրող անհատներից մեկը, և տասնամյակների Ձեր փորձով Դուք եք նաև Սյունյաց անառիկ բերդը պաշտպանողը:

Ձեր միտքը, խոսքն ու գործը սյունիքո՛ւն են, Դուք ապրում եք Սյունիքո՛վ, Դուք եք Սյունիքի իրական արժանապատվության մերօրյա կրողը:

Պատմական այս ժամանակաշրջանում, երբ Սյունիքը կանգնած է մահացու մարտահրավերների առջև, նաև Ձեզ է տրված սյունեցիներին առաջնորդելու ու Սյունիքը կործանումից փրկելու առաքելությունը, ինչին էլ մեծ ոգևորությամբ սպասում են բազում հայրենասեր սյունեցիներ՝ պատրաստակամ՝ Ձեզ հետ միասին Սյունիքը մաքրել բոլոր տեսակի թշնամիներից, կեղծիքներից ու կեղծավորներից, անարդարությունից ու առավել վտանգավոր դարձած հուսահատությունից և անորոշությունից:

Սյունյաց աշխարհի հանդեպ Ձեր անմնացորդ սերը վարակիչ է. Դուք անգերազանցելի եք, չերկրորդվող տեսակ, հավատարիմ ընկեր, սրտացավ բարեկամ, իմաստուն խորհրդատու, ընտանիքի գլուխ, ազգային արժեքների և առաքինությունների մարմնացում:

«Սյունյաց արծիվներս» և «Հայոց արծիվներս» հպարտ ենք, որ ականատեսը և ուղեկիցն ենք Ձեր անցած փառավոր ճանապարհի:

«Հայոց արծիվներ. միասնական Հայաստան» կուսակցության, 44-օրյա, Ապրիլյան և Արցախյան 1-ին պատերազմների կամավոր մասնակից «Հայոց արծիվներ» կամավորական մարտական ջոկատի և անձամբ իմ անունից շնորհավորում եմ Ձեզ՝ Ձեր պատվավոր 70-րդ տարեդարձի առթիվ՝ մաղթելով ամուր առողջություն, Սյունյաց անխախտ լեռների համառություն և Սյունյաց հերոսների անդավաճան ոգու ուժ:

Հայն ունի երկու հավատ՝ Աստվա՛ծ և Հայաստա՛ն, ու թո՛ղ Աստված և Հայաստանը միշտ լինեն Ձեր արյան մեջ, Ձեր սրտում և Ձեր գործերում:

Աստվածահավա՛տ և Սյունիքապա՛շտ Սամվել Սյունեցի, թո՛ղ Բարձրյալը միշտ լինի Ձեզ ուղենշողը և առաջնորդողը:

ԽՈՐԻՆ ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԽԱՉԻԿ ԱՍՐՅԱՆ,
«ՀԱՅՈՑ ԱՐԾԻՎՆԵՐ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ, «ՀԱՅՈՑ ԱՐԾԻՎՆԵՐ»
ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՄԱՐՏԱԿԱՆ ՋՈԿԱՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ,
44-ՕՐՅԱ, ԱՊՐԻԼՅԱՆ և ԱՐՑԱԽՅԱՆ 1-ԻՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ
ԿԱՄԱՎՈՐ ՄԱՍՆԱԿԻՑ,
«ՄԱՐՏԱԿԱՆ ԽԱՉ» 1-ԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ,
ԳՆԴԱՊԵՏ

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԸ 70 ՏԱՐԵԿԱՆ Է

Սյունյաց աշխարհի հոգևորի ու կեցության բացառիկ մատենագիրը

Սկիզբը՝ էջ 5

ներով Բարձրյալը շռայլորեն օժտել է նրան, որոնք, բավականաչափ առաջացած իր այս տարիքում էլ, ապշանք հարուցող աննահանջ համառությամբ դեռ ուղեկցում են նրան:

Եվ ահա՝ 2021 թվականին «Սյունյաց երկիր» թերթի լրատվական թողարկումներն իր բնականոն պարբերականությամբ շարունակելով, Սամվել Ալեքսանյանն իր լրատվական աշխատանքային գործունեությանը զուգահեռ, հիմնեց «Սյունյաց երկիր. մշակութային» հանդեսը՝ ստանձնելով ասելիքի բոլորովին այլ հարթակ ներկայացնող, պատասխանատվության ավելի բարձր նշաձող ենթադրող այդ պարբերականի խմբագրի պարտականությունները նաև:

Եթե հետադարձ հայացք ձգենք «Սյունյաց երկիր» թերթի անցած ճանապարհին, ապա պիտի տեսնենք, որ այդ հանդեսը «Սյունյաց երկիր» թերթի կուտակած բավականաչափ փորձի և անցած ուղու հանգրվանային տրամաբանության արդյունքում է ծնվել:

Սամվել Ալեքսանյանի խմբագրած «Սյունյաց երկիր» թերթն իր գործունեության տարիներին՝ հատուկ, ծավալուն համարներ լույս ընծայելու գեղեցիկ ավանդույթ էր ձևավորել, որոնք հիմնականում նվիրված էին Սյունյաց աշխարհի համապատկերում վաստակ ունեցող, տարբեր բնագավառներում իրենց նշանակալի ավանդը ներդրած մարդկանց անցած ճանապարհին:

Հատուկ համարներով «Սյունյաց երկիր» թերթը դեպքից դեպք անդրադառնում էր նաև մշակութային աշխարհի ներկայացուցիչների գործունեությանը:

Այդ տարիներին թերթը երկու հատուկ համար՝ Գուսան Աշոտի 100-րդ և 110-րդ ծննդյան հոբելյանական տարեդարձների առիթով, նրա երգարվեստին էր նվիրել: Դրանցից երկրորդը բավականին ծավալուն էր (22,5 տպագրական մամուլ) և ներկայացնում էր մեր սիրելի գուսանի անցած կյանքի ուղու և գործունեության առավել ամբողջական ու համապարփակ պատկերը: Համարը հագեցած էր, հայկական իրականության մեջ մեծ ճանաչում ունեցող, հայտնի անհատականությունների կողմից նրա արվեստի մասին հնչեցված տարաբնույթ գնահատանքի ու արժևորման խոսքերով: Համարում ներկայացված էին նաև Գորիս քաղաքում Գուսան Աշոտի հետ առնչված մարդկանց կողմից գրի առնված հուզաթաթավ հուշապատումներ, որոնք մեկ անգամ ևս ի ցույց էին դնում այն փաստը, որ նա ոչ միայն իր արվեստի վաստակով է «Ժողովրդական գուսան» կոչման մեծարմանն արժանացել, այլ նաև քաղաքացիական կյանքում է ժողովրդական մարդու կեցվածքով ապրել ու ժողովրդի գորովանքով պարուրված՝ նրա սերը վայելել:

Հատուկ համարներով թերթն անդրադարձել է նաև Սյունյաց աշխարհի եկեղեցական ու հոգևոր իրականությանը: Վահանավանքի 1100–ամյակի առիթով բավականին ծավալուն համար է (25 տպագրական մամուլ) նվիրել այդ վանքի կառուցմանը, նրա պահանջվածությանն ու տարածաշրջանային առաքելությանը՝ միաժամանակ ներկայացնելով նաև նրա հոգևոր առաջնորդների գործունեությունն ու նրանց ճակատագրերը

Թերթը հատուկ համար է նվիրել նաև Գրիգոր Տաթևացու կյանքին ու գործունեությանը՝ նրա վաստակն արժևորած մեծահամբավ անհատականությունների տարատեսակ ասելիքների և գնահատանքների անդրադարձներով ներկայացրել միջնադարում ապրած այդ մեծ մտածող հայի թողած գիտական ու հոգևոր հսկայական ժառանգությունը:

«Սյունյաց Մեծ Մովսեսը» խորագիրը կրող հատուկ, բավականաչափ ծավալուն (18,5 տպ. մամուլ) համարով «Սյունյաց երկիր» թերթն անդրադարձել է նաև ծննդյամբ սյունեցի, 101-րդ ամենայն հայոց կաթողիկոս, հայոց ազգային-եկեղեցական վերջին սուրբ Մովսես Գ Տաթևացու (Խոտանանցի) կյանքին ու հոգևոր գործունեությանը՝ մոռացության մշուշից դուրս բերելով ու այսօրվա սերունդներին ներկայացնելով նրա վսեմափայլ նկարագիրը, որում ամբողջովին տեսանելի է դառնում նաև ժամանակակիցների կողմից նրա անվանը կցված «Մեծ» որակումը:

Մշակութային ուղղվածություն ունեցող համարների շարքում, անկասկած, պիտի նաև ընդգրկել Սյունյաց աշխարհից սերված, հայագիտության մեջ իրենց անունները ոսկե տառերով գրած վիթխարի անհատականություններ՝ Նիկողայոս Ադոնցին ու Մորուս Հասրաթյանին նվիրված հատուկ համարները:

Հիշողությանս մեջ «Սյունյաց երկրի» կողմից կերպարվեստին նվիրված միայն մեկ դեպք է մտապահվել, երբ թերթը հատուկ համարի թողարկումով անդրադարձել էր կապանցի գեղանկարիչ Ռոբերտ Կամոյանի ստեղծագործական աշխարհին:

«Սյունյաց երկիր» թերթի այդ տարիների մշակութային ուղղվածությամբ հրատարակած հատուկ համարների մեծ մասը նվիրված է եղել գրական աշխարհի մարդկանց կյանքին ու ստեղծագործական ժառանգությանը: Գրական հատուկ համարներ են նվիրված եղել արձակագիրներ Խաչատուր Աբովյանին, Ակսել Բակունցին, Սերո Խանզադյանին, Սուրեն Այվազյանին, Արկադի Ծատուրյանին, բանաստեղծներ Համո Սահյանին, Տիգրան Գրիգորյանին, Գագիկ Դավթյանին:

Ռոբերտ Էջանանցու գործունեությանն ու վաստակին նվիրված հատուկ համարն էլ ես կընդգրկեի գրական համարների շարքում, քանի որ ամենայն հայոց հոգևորն ու մշակութայինն իր ներաշխարհում կրելուց և մաքրամաքուր էությամբ Մեծ մտավորական լինելուց զատ, այդ անպարագիծ անհատականությունն իր ամբողջ կյանքը գրին ու գրչին նվիրաբերած մշակ է եղել:

Գրական աշխարհի մարդկանց նվիրված այդ համարներից ուզում եմ առանձնացնել Համո Սահյանի 100-ամյակին լույս ընծայված հոբելյանական հատուկ համարը, որի թողարկման մեջ նաև իմ համեստ մասնակցությունն եմ ունեցել:

Խոսքիս մեջ դեռ կանդրադառնամ, թե ինչու՞ հատկապես կանգ առա հենց Սահյանին նվիրված համարի վրա:

«Համո Սահյանն իր 100-ամյակին էլ մեզ հետ է» խորագիրը կրող հոբելյանական հատուկ համարն ամենածավալունն էր (26 տպագրական մամուլ), և առ այսօր այդ ծավալը գերազանցող համար չի թողարկել ոչ «Սյունյաց երկիր» թերթը, ոչ էլ «Սյունյաց երկիր. մշակութային» պարբերականը: Այդ համարը հանրագիտարանային համապարփակությամբ անդրադարձել էր Սահյան երևույթի կյանքը, կերպարն ու նրա վաստակն ամբողջացնող բոլոր դրսևորումներին՝ այդ ամենը համեմելով նրա ստեղծագործական ժառանգության մասին հնչեցված գրական աշխարհի բազմաթիվ հանրահայտ դեմքերի գնահատանքի տարաբնույթ և ուշագրավ ասելիքներով: Եթե թերթը գրքի տեսքով հրատարակվեր՝ այն բաղկացած կլիներ 416 էջից և այդ գրքին, առանց վարանելու, կարելի էր սահյանագիտությանը նվիրված դասագրքի կարգավիճակ շնորհել:

Իր երկարամյա լրագրողական գործունեության տարիներին՝ Սամվել Ալեքսանյանն անաչառ լրատվությամբ անդրադարձել է Սյունյաց աշխարհի հանրային իրականության թե՛ տնտեսական, թե՛ սոցիալական, թե՛ իրավական, թե՛ բարոյական բազմաթիվ իրադարձությունների ու իրողությունների. անկաշառորեն լուսաբանել դրանք, համարձակորեն բարձրաձայնել ճշմարտությունը եվ միշտ մնացել համամարդկային արժեհամակարգով առաջնորդվող լրագրողի անկողմնակալ հարթության վրա:

Թերթն ընթերցելուց այն տպավորությամբ էիր պարուրվում, որ Համո Սահյանի մասին գրված ու ասված ամեն ինչ, իր պրպտուն խառնվածքի բնույթին հավատարիմ, խմբագիր Սամվել Ալեքսանյանը «պեղել», գտել, հավաքել ու մեկտեղել է իր հրատարակած հոբելյանական այդ բավականին ծավալուն համարում: Ու անհնար էր դառնում պատկերացնելը, որ Սահյանի մասին գրված որևէ արժեքավոր խոսք Սամվել Ալեքսանյանի ներաշխարհի տեսադաշտից դուրս մնացած լինի:

Ժամանակային կտրվածքով բավականին առաջ անցնելով ասեմ, որ 2024 թ. մեր հեռախոսազրույցներից մեկի ժամանակ նա ինձ հայտնեց, որ «Սյունյաց երկիր. մշակութային» պարբերականի հերթական համարը ցանկանում է նվիրել Համո Սահյանի ծննդյան 110-րդ հոբելյանական տարեդարձին, բայց նաև իր առջև մի այսպիսի խնդիր է դրել, որ նրա 100-ամյակին՝ «Սյունյաց երկիր» թերթում հրատարակած ոչ մի նյութ չի ընդգրկելու հոբելյանական նոր համարում, այլ բոլորովին թարմ նյութերով է հրատարակման ներկայացնելու մշակութային այդ համարը:

Ես փորձեցի նրան հետ պահել այդ գաղափարից՝ բարձրաձայնելով մի քանի նկատառումներ: Նախ՝ այն, որ նախկին համարում ընդգրկված նյութերի անվանի հեղինակներից շատերը վաղուց կնքել են իրենց մահկանացուները, և նրանց սրտաբուխ ու գրական կշիռ ունեցող ասելիքներն արդեն պահ են տրված ժամանակներին և երբեք չեն կորցնելու իրենց գնահատանքների արդիականությունը, հետո մատնանշեցի այն խնդիրը, որ հոբելյանական համարներն ինքնին որոշակի ծավալունություն են ենթադրում ու բավականին դժվար կլինի այդ քանակությամբ արժեքավոր նոր նյութեր գտնելը: Իմ տեսակետը փորձեցի հիմնավորել նաև այն հանգամանքով, որ Սահյանի 100-ամյակին նվիրված համարի որոշ նյութերից՝ ասենք՝ Իսահակյանի, Մահարու, Խանզադյանի կամ այլ անհատականությունների խոսքերից, գուցե հոբելյանական նոր համարի ընթերցողներից շատերը բոլորովին անտեղյակ լինեն, և այդ նոր համարը դառնա վերոնշյալ հեղինակությունների գնահատանքների հետ հաղորդակցվելու նրանց առաջին հնարավորությունը:

Նա իր որոշման մեջ անդրդվելի մնաց՝ դա հիմնավորելով հետևյալ պատճառաբանությամբ, որ չի ցանկանում իր խմբագրած պարբերականների մեջ կրկնվել և ինձնից խնդրեց ուղարկել Սահյանի մասին գրածս՝ «Հայ մեծ բանաստեղծի զարմանահրաշ տեսակը» վերնագրված գնահատանքի խոսքը: Ես ուղարկեցի իմ խոսքն ու նաև երջանկահիշատակ Ֆելիքս Բախչինյանի հեղինակած, Սահյանի ստեղծագործական աշխարհին նվիրված «Տագնապների անընդգրկելիությունը» հոդվածը:

Որքան հիշում եմ՝ այդքանով ավարտվեց այդ հոբելյանական համարի լույս ընծայմանն ունեցած իմ մասնակցությունը:

Երբ համարը լույս տեսավ, առաջին բանը, որի վրա կենտրոնացավ ուշադրությունս, դա այն էր, որ խմբագիր Սամվել Ալեքսանյանը հավատարիմ էր մնացել մեր հեռախոսազրուցի ժամանակ հնչեցրած իր որոշմանը և Սահյանի 100-ամյակին նվիրված՝ հատուկ համարում ընդգրկված՝ ոչ մի գնահատանքի խոսք կամ հոդված չէր ներառել Սահյանի 110-ամյակին լույս ընծայված «Սյունյաց երկիր. մշակութային» հանդեսի համարում:

Ըստ իս՝ այս (16 տպագրական մամուլ կազմող) համարում՝ Սահյանի ստեղծագործական աշխարհի մասին հնչեցված կարծիքների, գնահատությունների, բանաստեղծական շարքերի և հարցազրույցների ֆոնին՝ բովանդակային առումով, առավել ընդգծված ընդգրկմամբ ու քաղցրությամբ էին ներկայացված Սահյան բանաստեղծի մարդ տեսակն ու այդ մարդուն երկնած, նրա գրչի զորությամբ սրբագործված Սյունյաց անզուգական բնաշխարհը:

Կարելի է ասել, որ այս համարը՝ Սահյան մարդու և նրա պոեզիայի համ ու հոտով ներծծված, ընթերցողի ներաշխարհը սահյանական իմաստնության գրավչությամբ պարուրող գրական շտեմարանի էր նմանվել:

Իհարկե, ամեն դեպքում՝ Սամվել Ալեքսանյանի խմբագրական որակները որոշակիորեն ընկալելի դարձնելու հանգամանքն էր հիմնական պատճառը, որ «Սյունյաց երկիր» թերթի գրական ուղղվածություն ունեցող հատուկ համարների հիշատակումից հետո՝ սևեռվեցի 2014 թ. լույս տեսած՝ Սահյանին նվիրված բավականաչափ ընդգրկուն հոբելյանական համարի վրա: Սակայն հատկապես այդ համարն էր նաև հնարավորություն ընձեռում ասելիքս ծավալելով՝ անդրադառնալ «Սյունյաց երկիր. մշակութային» պարբերականի 2024 թ. հրատարակած՝ Սահյանի ծննդյան 110-րդ տարեդարձին նվիրված համարին և տեսանելի դարձնել նաև խմբագրական գործունեության տքնանքից չխուսափող Սամվել Ալեքսանյանի ինքնավստահ կեցվածքն ու ամեն դժվարություն հաղթահարելու պատրաստ խմբագրի նրա խիզախ տեսակը:

Անժխտելի եմ համարում այն փաստը, որ «Սյունյաց երկիր» թերթի մշակութային բովանդակությամբ հատուկ համարների թողարկումների փորձառության հենքի վրա է հասունացել ու ծնվել «Սյունյաց երկիր. մշակութային» պարբերական հիմնելու գաղափարը, որի հրատարակման գործը 2021թ. խմբագիր Սամվել Ալեքսանյանն իրականություն դարձրեց՝ շարունակելով լինել նաև «Սյունյաց երկիր» թերթի գլխավոր խմբագիրը: «Սյունյաց երկիր. մշակութային» հանդեսը եռամսյա պարբերականությամբ բավականին ծավալուն համարներով սկսեց ներկայացնել տարաբնույթ մշակութային թեմաներ:

Այդ մշակութային պարբերականի առաջին համարը (9 տպագրական մամուլ) Սամվել Ալեքսանյանը նվիրել էր Սյունյաց աշխարհի սրբավայրերին: Ինձ թվում է՝ առաջին համարում ընդգրկված այդ թեման իր խորքում պարբերականի ծնունդն արժևորող խորհրդանշական իմաստ էր նաև ներառում: Քանի որ, ըստ իս, մշակույթ և սրբավայր բառերը քաղաքակրթական տարածության մեջ ի վերջո համարժեք հոմանիշների են վերածվում:

Երկրորդ համարը (12 տպագրական մամուլ)՝ «Սյունիքի մերօրյա գրական աշխարհը» խորագրով, ծննդյամբ սյունեցի ստեղծագործողներին էր նվիրված:

Հաջորդ համարը (13 տպագրական մամուլ)՝ «Գարեգին Նժդեհ. մեծ հայորդու գրական-գեղարվեստական ժառանգությունը և նրա անզուգական կերպարի մեկնությունները մեր մշակութային աշխարհի տիրույթներում» խորագիրն էր կրում:

«Մեր գահերեց զորավարը՝ առասպելացած, մեր անպարտելի ոգու այսօրեական ու մշտնջենական խորհրդանիշը» խորագրով համար է «Սյունյաց երկիր. մշակութային» պարբերականը նվիրել նաև Դավիթ Բեկին:

Պարբերականն առանձին ծավալուն համարով (17 տպագրական մամուլ) անդրադարձել է նաև քարանձավային ներկայացումներից մինչև մեր օրերը ձգվող հայոց բեմարվեստի սյունիքյան դրսևորումներին:

Բավականին խոսուն՝ «Պարը՝ շնորհ գոյաբանական, հայոց ոգու և ինքնության ադամանդյա ցոլանք, մեր լինելիության ու գեղեցկության պանծացում» խորագրով ծավալուն համար է պարբերականը նվիրել (15 տպագրական մամուլ) պարարվեստին:

«Քանդակագործներ Սյունիքից» խորագրով երկու ծավալուն համարով (10 տպագրական և 9 տպագրական մամուլով) ներկայացրել է ծագումով սյունեցի քանդակագործներին:

Ներքոնշյալ խորագրերով երկու համար է պարբերականը նվիրել հայոց երաժշտարվեստի հանճարներին՝ «Աշխարհահռչակ Արամ Խաչատրյանը՝ Սյունիքի Գողթն գավառից» (13 տպագրական մամուլ) և «Կոմիտաս մարգարեն՝ սերված Սյունիքի Գողթն գավառից» (19 տպագրական մամուլ):

«Սյունիքը՝ մանրանկարչության բնօրրան» (12 տպագրական մամուլ) խորագրով և Սամվել Ալեքսանյանի «Սյունիքում են մանրագործվել հայ մարանկարչության՝ աղոթք դարձած բազում գոհարներ» ծավալուն և բավականին հիմնավոր տեղեկատվական խմբագրականով համար է նվիրել պարբերականը հայկական մանրանկարչությանը:

Պարբերականը «Գեղանկարիչներ Սյունիքից» խորագրով և բավականին ծավալուն համարով (19 տպագրական մամուլ) ներկայացրել է նաև Սյունյաց աշխարհի գեղանկարիչներին:

Ես թվարկեցի «Սյունյաց երկիր. մշակութային» հանդեսի թողարկած համարների ոչ ամբողջական ցանկը: Իր գործունեության 6-րդ տարվա շեմին պարբերականն արդեն լույս է ընծայել 20 մշակութային համար, որոնց միայն խորագրերն ու ներ-

Սամվել Ալեքսանյան՝ «Դու ծաղկավառ Զանգեզուրի բարի ծնունդ»

Կան մարդիկ, որոնց համար ընտրած մասնագիտությունը պատիվ է, խիղճ, պաշտամունք: Նրանց համար մասնագիտությունը նաև կենաց ծառ է՝ հոգևոր առումով: Ասածս վերաբերվում է «Սյունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանին:

Նա Գորիսի «Զանգեզուր» թերթի ստեղծագործական թիմին միացավ 1988-ի նոյեմբերին, եկավ որպես խմբագիր, եկավ այն օրերին, երբ ժամանակները ծառս էին ելել, և հեշտ չէր այդ հորձանուտում նավարկել ու ճիշտ որոշումներ ընդունել: Բայց հմուտ նավապետի նման հաջողությամբ նավարկեց՝ ժամանակների օվկիանոսում ճիշտ կողմնորոշվելով և ողջամիտ որոշումներ կայացնելով, որոնք բխում էին ժամանակի ոգուց և Գորիսի շրջանի առջև ծառացած խնդիրներից:

Հայաստանը բարձրացրել էր անկախության դրոշը, Արցախի համար մարդիկ ոտքի էին ելել: Փոթորկվում էր երկիրը, Գորիսը՝ նույնպես...

Սամվել Ալեքսանյանի նախաձեռնությամբ, թեև դժվարությունները սահման չունեին, թերթը լույս էր տեսնում շաբաթը երեք անգամ: Բոլոր համարները ծայրից ծայր տոգորված էին ժամանակի շնչով ու գորիսեցիների մտահոգություններով:

Իսկ ազերիները ռմբակոծում էին քաղաքը, գյուղերը...

Սամվել Ալեքսանյանը հավաքեց կոլեկտիվը և ասաց. թերթը պետք է դառնա այս օրերի վավերագրողը, յուրաքանչյուր իրադարձություն պետք է պատշաճ ձևով լուսաբանվի, որ գալիք սերունդները ճիշտ պատկերացում կազմեն մեր օրերի հերոսականության մասին:

Եվ թերթը դարձավ Գորիսի տարածաշրջանի անզուգական տարեգիրը:

Սամվել Ալեքսանյանն ամենուր մեզ հետ էր (երբ գնում էինք որևէ իրադարձություն լուսաբանելու)՝ թե՛ սահմանում, թե՛ ազերիների հետ բանակցությունների ժամանակ, թե՛ գերիներ փոխանակելիս, թե՛ Բազարչայի հեռագնա արոտավայրերում, որտեղ քաջալերում էինք մեր հովիվներին, անասնապահներին, սահմանապահներին:

Հիշում եմ՝ մի անգամ էլ մոլորվեցինք սարերի ճանապարհներին և ազերիների տիրույթում հայտնվեցինք: Ամեն րոպե սպասում էինք ազերիների կրակոցներին... Սամվել Ալեքսանյանն էր, ես էի, Գորիսի կենցաղ սպասարկման կոմբինատի տնօրեն Կամո Սարգսյանը. շունչներս պահած հետևում էինք մեքենայի ընթացքին, վերջապես վերադարձանք հայկական ուժերի հսկողության ներքո գտնվող տարածք:

Եվ նման բազմաթիվ միջադեպեր, որոնք մեզ չէին ընկճում կամ նահանջի մղում...

Փոթորկահույզ և ճակատագրական այդ օրերին Սամվել Ալեքսանյանի շնորհիվ «Զանգեզուր» թերթի խմբագրությունը դարձել էր կռվի մեկնող տղաների թալիսմանն ու ոգեշնչման աղբյուրը:

Հիշում եմ՝ օրերից մի օր խմբագրություն էր եկել մոտոհրաձգային բրիգադի լեգենդար հրամանատար Ռեմիկ Մարդանյանը՝ իր տղաների հետ: Նրանք սեղանին փռեցին քարտեզը և մեր աչքի առաջ կազմեցին առաջիկա հարձակման մարտական պլանը: Հետո ձեռքսեղմումներ, հրաժեշտի ջերմ ու սրտաբուխ խոսքեր...

Օրեր անց ուրախ լուր ստացանք. տղաները գերազանց են կատարել իրենց մարտական առաջադրանքը՝ առանց զոհերի:

Հայրենատեր տղերքի համար հող հայրենիի ճակատագիրը որոշվում էր կռվի դաշտում: Սամվել Ալեքսանյանը նույնպես հող հայրենիի համար ոտքի էր ելել՝ գրչով, որով նա պատմությանն էր հանձնում այդ խելակորույս, բայց և հերոսական օրերի քրոնիկոնը:

Սյունիքի առաջին մարզպետի հրամանով 1996-ի մարտին նա աշխատանքի անցավ Սյունիքի նորաստեղծ մարզպետարանում՝ լրատվության և հանրության հետ կապերի բաժնի պետ:

Նրա ջանքերով նույն թվականին հիմնադրվեց մարզային երեք լրատվամիջոց: Իսկ 2003 թվականին՝ որպես մարզային «Սյունիք» և «Սյունյաց աշխարհ» թերթերի իրավահաջորդ, հիմնադրեց «Սյունյաց երկիր» պարբերականը, որը դարձավ Սյունիքի ոգեղեն ամրոցը: Ի վերուստ, իրեն տրված առաքելությանը հավատարիմ, Սամվել Ալեքսանյանը կարողացավ թերթը դարձնել ամեն սյունեցու օջախի սպասված լրատվամիջոցը: Հատկապես ուշագրավ են Սյունիքի պատմամշակութային կյանքը լուսաբանող հատուկ համարները, որոնք դաս-դասագիրք են հարյուրավոր մարդկանց համար:

Սյունիքը Սամվել Ալեքսանյանի համար ոչ միայն ոգեշնչման աղբյուր է... Նա իր գործելակերպով ապացուցեց, որ Սյունյաց տան իսկական ու արժանապատիվ զավակն է ու տերը: Եվ հանուն այդ տան, նա նույնիսկ անհնարինն է հնարավոր դարձնում, ինչի համար էլ նրա խմբագրած լրագիրը շարունակում է մնալ արժանապատիվ սյունեցիների օջախի լույսը:

Այսօր Սամվել Ալեքսանյանի հոբելյանն է...

Գուսան Աշոտի խոսքերով ասեմ՝ շնորհավոր հոբելյանդ, «Դու ծաղկավառ Զանգեզուրի բարի ծնունդ...»:

ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Սամվել Ալեքսանյան. յոթ տասնամյակ՝ խոսքի և սկզբունքի մեջ

Սկիզբը՝ էջ 7

ժամանակի հետ չի մաշվում: Նրա թողած ժառանգությունը չի սահմանափակվում տեսանելի արդյունքներով: Այն ներառում է սերունդների կրթություն, մշակութային գիտակցության ձևավորում, արժեքների փոխանցում:

Նրա համար խոսքն արժեք է, իսկ սկզբունքը՝ պարտավորություն: Պատահական չէ նրա ձևակերպումը. «Իշխանավորները կգան ու կգնան, իսկ ճշմարիտ խոսքը կմնա ու կփոխանցվի գալիք սերունդներին»: Այս համոզմունքն է տարիներ շարունակ ձևավորել «Սյունյաց երկրի» դիմագիծը՝ զերծ պահելով այն ժամանակավոր շահերից ու իրավիճակային ճնշումներից:

Այսօր հետադարձ հայացք ձգելով Սամվել Ալեքսանյանի յոթ տասնամյակին՝ կարելի է վստահ ասել՝ նրա գործը վաղուց անցել է անհատական նվաճումների սահմանը: Նրա խմբագրական ուղին դարձել է ծառայություն Սյունիքին, իսկ «Սյունյաց երկիրը»՝ այդ ծառայության կենդանի վկայությունը:

Սամվել Ալեքսանյանի հոբելյանը առիթ է ոչ միայն շնորհավորանքի, այլև խորին արժևորումի: Նրա գործն արդեն իսկ խոսում է իր փոխարեն: Եվ այդ գործը կմնա՝ որպես խոսքի, սկզբունքի և գործով հաղթելու օրինակ:

Այս հոբելյանը պարզապես տարեթիվ չէ. այն սահմանագիծ է, որտեղ անձնական կենսագրությունը միաձուլվում է հանրային հիշողության հետ:

Սամվել Ալեքսանյանի անցած ճանապարհը հաստատում է մի պարզ ճշմարտություն. ժամանակները փոխվում են, պայմանները՝ նույնպես, սակայն արժեքները մնում են, երբ դրանց տեր են կանգնում լուռ, համառ և ստեղծող մարդիկ: Նրա ուղին արդեն իսկ պատկանում է Սյունիքի ժամանակագրությանը՝ որպես սկզբունքային խոսքի, մշակութային հիշողության պահպանման և արժանապատիվ ծառայության օրինակ:

Իմ խորին հարգանքն ու շնորհակալությունն եմ հայտնում Սամվել Ալեքսանյանին՝ արած գործի, անցած ուղու և չդավաճանած առաքելության համար:

Թող առաջիկա տարիներն իրենց բնական ընթացքով բացեն նոր հնարավորություններ՝ առավել ամրացնելով այն ստեղծագործական ազատությունն ու ներքին ամբողջականությունը, որոնց վրա կերտված է նրա ամբողջ ճանապարհը:

Նրա յոթ տասնամյակն արդեն իսկ արժեք է, իսկ գործը՝ վկայություն:

ԹԵՀՄԻՆԱ ՄԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ

ԱՄԿԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԸ 70 ՏԱՐԵԿԱՆ Է

Կայացված ծավալները բավական են պատկերացնելու համար հիշատակված թեմաների ոգեղեն տարածքների ընդգրկման սահմաններն ու մասշտաբները:

Թեև ես հարյուր տոկոսանոց տեղեկացվածություն չունեմ, սակայն համոզված եմ, որ վերջին երեսուն տարում որևէ գիտակրթական հաստատություն կամ արվեստի ինչ-որ բնագավառ ներկայացնող միություն և անգամ մշակույթի ոլորտը համակարգող նախարարությունը, որևէ մշակութային իրողության մասին, տարատեսակ ասելիքներով հեղինակների արժեքավոր կարծիքներ մեկտեղած, գոնե մեկ գիրք կամ հանդես հրատարակած լինի, որը, բավականին փոքրիկ խմբագրակազմ ունեցող, «Սյունյաց երկիր. մշակութային» հանդեսի լույս ընծայած համարներում ընդգրկված մշակութային թեմաների բովանդակային ասելիքի մասշտաբայնության ու շարադրված խոսքերի անվիճարկելիության հետ կարողանա համեմատվել:

Եվ դա ես ոչ թե այն հանգամանքով եմ պայմանավորում, որ հիշատակված կառույցները չեն ունեցել կամ չունեն դա անելու պոտենցիալը, այլ այն պարզ իրողությամբ, որ հայկական իրականության մեջ այդ կարգի ձեռնարկումներում, որոշ հեղինակությունների հանդեպ տածած կանխակալ տրամադրվածության պատճառով, այդ աշխատանքը նախաձեռնողներին չի ուղեկցում տվյալ թեման անկաշառ ամբողջությամբ ընդգրկելու ու ներկայացնելու անաչառ կամեցողությունը:

Ասել է թե՝ հիշատակածս կառույցների հետ նույն հարթության տիրույթում՝ «Սյունյաց երկիր. մշակութային» հանդեսի «շահեկան» վիճակում հայտնվելու հանգամանքը պայմանավորված է նաև նրանով, որ պարբերականի ձեռք բերած նյութերի մեջ, եթե հերթական մշակութային թեմայի մասին որևէ մեկի կողմից ինքնատիպ մոտեցումով ճշմարտություն պարունակող արժեքավոր ասելիք է հնչեցվել, ապա անկախ նրանից, թե ո՞վ է այդ խոսքի հեղինակը, հերթական համարում Սամվել Ալեքսանյանի խմբագրած հանդեսը, առանց խանդի կամ սնապարծության նշույլ իսկ դրսևորելու, այն ընդգրկում է:

Արժանին պիտի մատուցել «Սյունյաց երկիր» թերթի և «Սյունյաց երկիր. մշակութային» պարբերականի թողարկումների տարեգրության մեջ իրենց անուրանալի ավանդը ներդրած խմբագրակազմի աշխատակիցներին, ովքեր տարիներ ի վեր կարողացել են խմբագիր Սամվել Ալեքսանյանի մոլեռանդ գործունեության ռիթմին համընթաց նվիրումով աշխատել:

Յուրաքանչյուր հերթական համարի խմբագրական նյութերի հավաքագրման «հոսքագիծը» ամենավերին՝ պրկված աշխատանքային ռեժիմի մեջ դնելու Սամվել Ալեքսանյանի անձնուրաց նվիրվածությունն ու ակնածալի պատասխանատվության զգացմամբ թեմային վերաբերող նյութեր հայթայթելու որոնողական համառությունը բնութագրող ածական դժվարանում եմ գտնել: Իսկ եթե միտքս նրա խմբագրական գործունեության հարթության մեջ ձևակերպեմ՝ պիտի ասեմ՝ ես չեմ պատկերացնում, որ հայկական իրականության մեջ մշակութային աշխարհի ինչ-որ ոլորտում շատ թե քիչ վաստակ ունեցող անհատ Սամվել Ալեքսանյանի տեսադաշտից դուրս մնացած լինի, ու նրա հետ ինքը հեռախոսազրույց ունեցած չլինի: Հենց նշածս որակների շնորհիվ է նա, առանց բարդույթների, մեկտեղում տվյալ մշակութային բնագավառը ներկայացնող անհատների կուտակած իմացությունը և հին ու նոր ասելիքներով կարողանում ամբողջացնել տվյալ մշակութային թեմայի ընդհանուր պատկերն ու նրա անցած ճանապարհի ողջ պատմությունը:

Սամվել Ալեքսանյանի տարիքում մարդիկ իրենց իմացածն են սկսում մոռանալ, իսկ նա, յուրաքանչյուր մշակութային նոր պարբերական թողարկելու խմբագրական գործունեությունն իրականացնելիս, կարողանում է նաև միաժամանակ այդ աշխատանքն իր համար ուսումնառության հերթական գործընթացի վերածել:

Եվ ես համոզված եմ, որ նրան չճանաչող ընթերցողներից շատերը ցանկացած մշակութային համարի նրա գրած առաջնորդող խմբագրականը կարդալիս այն տպավորությունը պիտի ունենան, որ Սամվել Ալեքսանյանը մշակույթի կամ արվեստի այդ ոլորտի մասնագիտական կրթություն ունի...

Չեմ կարող չանդրադառնալ Սամվել Ալեքսանյանի կերպարն ամբողջացնող ևս մեկ իրողության: Դժվար է պատկերացնել, որ Սյունյաց աշխարհում դեռ կարող է գոյություն ունենալ պատմական անցյալ ունեցած աշխարհագրական մի տեղանք, ավերակների վերածված մի նախկին բնակավայր, հերթագայող սերունդների կողմից վաղուց մոռացված մի սրբավայր կամ ուխտատեղի, որոնցում Սամվել Ալեքսանյանը թողած չլինի իր ոտնահետքերը: Իսկ լրագրողական իր աշխատանքային գործունեության շրջանակներում երևի թե, առանց բացառության, նա շրջագայած լինի Սյունիքի բոլոր բնակավայրերով: Հաշվի առնելով մերօրյա փոխադրամիջոցների առկայությունը՝ ես կասկածում եմ, որ նախկինում ապրած Սյունիքի մեծանուն զավակներից որևէ մեկը՝ Սյունյաց աշխարհի ճանաչողությամբ կարողանա կանգնել հայրենագիտական այն հարթակին, որի վրա գտնվում է Սամվել Ալեքսանյանը:

Իր երկարամյա լրագրողական գործունեության տարիներին՝ Սամվել Ալեքսանյանն անաչառ լրատվությամբ անդրադարձել է Սյունյաց աշխարհի հանրային իրականության թե՛ տնտեսական, թե՛ սոցիալական, թե՛ իրավական, թե՛ բարոյական բազմաթիվ իրադարձությունների ու իրողությունների. անկաշառորեն լուսաբանել դրանք, համարձակորեն բարձրաձայնել ճշմարտությունը եվ միշտ մնացել համամարդկային արժեհամակարգով առաջնորդվող լրագրողի անկողմնակալ հարթության վրա: Մասնագիտական այդ որակների հետ մեկտեղ Սամվել Ալեքսանյանի քաղաքագիտական ընկալումներում պետականության ու հայրենատիրության հանդեպ ունեցած սրբազան ակնածանքը նրա մարդկային գոյությանը մշտապես ուղեկցող գերագույն արժեք է եղել:

Եթե ինձ հանձնարարվեր՝ Սամվել Ալեքսանյանին իր խմբագրական ու լրագրողական վաստակին համարժեք պարգևի արժանացնել՝ ես նրան Սյունյաց աշխարհի հոգևորի ու կեցության մեր ժամանակի բացառիկ մատենագրի տիտղոս կշնորհեի:

//

ԱՄԿԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԸ 70 ՏԱՐԵԿԱՆ Է

Սամվել Ալեքսանյանին. երբ գրիչդ զենքի արժեք ունի

Ո՞ւոտ չորս տասնամյակ քայլում եմ Ձեզ հետ, վայելում Ձեր ներկայությունը:

Ամեն անգամ թե ազգային, թե պետական, թե հասարակական, թե մշակութային խնդիրներ քննարկելիս հիանում ու հպարտանում եմ, որ մեր դժվար ժամանակներում մնում եք հաստատուն, անաչառ և ճշմարիտ:

Լրագրողական խիզախություն. այսպես եմ որակում «Սյունյաց երկիր» թերթի էջերում 22 տարի շարունակ տպագրվող գիտական հոդվածները, մշակութային բացահայտումները և հարցադրումները, որոնք մեր օրերում անգնահատելի կողմնորոշիչ դեր են խաղում, ինչպես եւ լինելու են սկզբնաղբյուրային նշանակության նյութեր գալիք սերունդների համար: Տարիների ստեղծագործական ակտիվ գործունեության արդյունքում «Սյունյաց երկիր»-ը դարձել է մեր հայ տեսակի բացահայտման, հազարամյակների ընթացքում մեր արածն ու դրածը ներկայացնելու անկրկնելի հարթակ, մեր ինքնության անփոխարինելի վկայական:

Թող ցույց տան ինձ մեկ ուրիշ լրատվամիջոց՝ մեր ժամանակներում գործող, որ այսքան հրատապ, բազմաբովանդակ հրապարակումներով կարողանում է ձեռքը պահել ժամանակի զարկերակի վրա:

Սյունյաց տան մեծերը՝ դարեր շարունակ, մագաղաթյա մատյաններով մեզ են փոխանցել դարերի իրադարձությունները, մեր նախնիների փառքը եւ պատգամել հայոց սրբազան այս լեռնաշխարհի լինելիության բանաձեւը: «Սյունյաց երկիր. մշակութային»-ի թողարկումները, ասում եմ առանց վերապահումի, նրանց առաքելության նորօրյա շարունակությունն են:

Այս ազգանվեր գործի հեղինակը՝ գրիչը զենք դարձրած, Սամվել Ալեքսանյանն է, ում 70-ամյակն է այսօր:

Շնորհավորանքի և մաղթանքի խոսքերի հետ ուզում եմ ճշմարտացիորեն փաստել՝ Սյունիքի ամեն քար ու թուփ, ամեն բնակավայր ու հուշարձան, ամեն քաղաք և ամեն սյունեցու անձամբ ճանաչող ու նրանց հոգսերով ապրող այրերից մեկը Դուք եք՝ պարոն Ալեքսանյան: Իմ երախտագիտությունն ու ջերմ մաղթանքներն եմ հղում Ձեզ՝ հոբելյանի առիթով:

Ձեր գրիչը մեզ համար ամենապահանջված զենքն է հատկապես ներկայումս, երբ հազարամյա Սյունիքը բախտորոշ ժամանակներ է ապրում:

Առո՛ղջ եղեք...

ՍՈՒՍԱՆՆԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԻ և ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ

Գորիսի նախկին շրջանն ընդգրկող երեք համայնքը կմիավորվեն մեկ համայնքի մեջ



Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն առաջարկում է փոփոխություններ և լրացումներ կատարել «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներում:

Նախագծով նախատեսվում է ձևավորել նոր՝ Գորիս համայնք, որում կներառվեն ներկայիս Գորիս, Տաթև և Տեղ համայնքները՝ վերջիններիս կազմում ընդգրկված 28 բնակավայրով:

Արդյունքում՝ նորաստեղծ Գորիս համայնքում 2026-ին կնշանակվի համայնքի ավագանու ընտրություն:

Միավորվող համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները կդադարեցվեն և նորաստեղծ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ստանձնման ժամկետների վերաբերյալ օրենքով կտրվեն իրավակարգավորումներ:

Սյունիքում կարևորում են Իրանի ներքին կայունությունը

Կապանում Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր հյուպատոս Մորթեզա Աբեդին Վարամին հունվարի 15-ին այցելեց «Սյունյաց երկիր» թերթի խմբագրություն:

Պարոն Աբեդինը նախ շնորհավորել է պարբերականի խմբագրակազմին՝ Նոր տարվա և Սուրբ Ծննդյան անցած տոների կապակցությամբ ու մաղթել ստեղծագործական հաջողություններ:

Գլխավոր հյուպատոսը բարձր է գնահատել Սյունիքի մարզային թերթի դերը հայ–իրանական հարաբերությունների լուսաբանման, երկու ժողովրդի բազմադարյա բարեկամության ամրապնդման գործում:

Մորթեզա Աբեդին Վարամինը ներկայացրել է տեղեկություններ՝ 2025 թ. դեկտեմբերի 28-ից Իրանում անցկացվող բողոքի ակցիաների և դրանց հետևանքով ստեղծված վիճակի մասին՝ տեղի ունեցող իրադարձությունները որակելով ահաբեկչական գործողություններ՝ Արևմտյան երկրների ու նրանց տարածաշրջանային գործընկերների կողմից հրահրված:

1979 թվականի Իսլամական հեղափոխությունից հետո, երբ տապալվեց երկիրն աղետալի վիճակի հասցրած և երկրի ինքնիշխանությունը զրոյացրած Իրանի թագավորական կարգը, քանիցս փորձ է արվել կասեցնելու Իրանի հազարավոր զավակների արյամբ ձեռք բերված հաղթանակը, որի վերջին դրսևորումը եղավ 2025 թ. հունիսի 12-ից 25-ը տեղի ունեցած իսրայելական ագրեսիան, ինչն էլ դադարեցվեց ԱՄՆ–ի խնդրանքով:

Այդ բոլորով հանդերձ և չնայած տարիներ տևող սանկցիաներին՝ Իրանի Իսլամական Հանրապետությունում՝ անցած ժամանակահատվածում, արձանագրվել և արձանագրվում են նկատելի հաջողություններ հատկապես գիտատեխնիկական առաջադիմության ոլորտում, երկրի անվտանգային համակարգի արդիականացման բնագավառում, որը հնարավորություն կտա ըստ արժանվույն պատասխանել ցանկացած ագրեսորի ոտնձգության:

Վերջին օրերի իրադարձությունները ցույց տվեցին երիցս, որ Իրանի ժողովուրդը համախմբված է երկրի առաջնորդի շուրջ, և հասարակությունը պառակտելու բոլոր փորձերը (ինչպես 2025–ի ամռանը) դատապարտվել են ձախողման:

Այդ ամենը չի նշանակում սակայն, որ երկրի ներսում չկան լուծման կարոտ խնդիրներ: Դրանք իշխանությունների ուշադրության կենտրոնում են և ժամանակի ընթացքում կգտնեն իրենց ողջամիտ լուծումը:

ԻԻՀ գլխավոր հյուպատոսը չափազանց կարևոր համարեց Հայաստանի Հանրապետության դիրքորոշումն Իրանում տեղի ունեցող իրադարձությունների հանդեպ:

Վերհիշվեց, մասնավորապես, Հայաստանում Իրանի նորանշանակ դեսպան Խալիլ Շիբղոլամի՝ երկու օր առաջ հնչեցրած խոսքերը. **«ՀՀ–ն դառնում է Իրանի դեմ թշնամաբար տրամադրված ուժերի գործողությունների կենտրոն» և «Մենք ամենադժվար պահերին կանգնել ենք Հայաստանի ժողովրդի և կառավարության կողքին...»:**

Տարօրինակ համարվեց հայկական կողմի պահվածքը՝ Երևանում՝ ԻԻՀ դեսպանատան դիմաց օրեր շարունակ ընթացող բողոքի ակցիաները թույլատրելու հարցում:

«Սյունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանը շնորհակալություն հայտնեց պարոն Մորթեզա Աբեդինին՝ մտքերի անկեղծ փոխանակության, Իրանում և նրա շուրջ տեղի ունեցող զարգացումների վերաբերյալ շատ թե քիչ հանգամանալից տեղեկություններ հաղորդելու համար:

Նշվեց գլխավոր հյուպատոս Մորթեզա Աբեդին Վարամինի նվիրական գործունեությունը՝ վերջին երեք տարում հայ–իրանական հարաբերությունները որակական նոր աստիճանի բարձրացնելու գործում:

Հենց նրա նախաձեռնությամբ են Սյունիքի բոլոր համայնքներում կազմակերպվել մշակութային տարբեր միջոցառումներ, որոնք ավելի ճանաչելի են դարձրել Իրանն ու նրա հազարամյա մշակույթը:

Բարձր գնահատվեց Իրանի դերը Հյուսիս–հարավ մայրուղու Ագարակ–Քաջարան հատվածի կառուցման, ինչպես և սյունիքանպաստ մի շարք այլ ծրագրերի կյանքի կոչման ուղղությամբ:

Խմբագիրը նաև անկեղծ մտահոգություն հայտնեց բարեկամ Իրանում տեղի ունեցող իրադարձությունների առիթով, դատապարտեց Արևմուտքի անթաքույց և շարունակական միջամտություններն Իրանի Իսլամական Հանրապետության ներքին գործերին ու չդադարող սպառնալիքներն այդ պետության հանդեպ, որը միջազգային իրավակարգի ու փլուզված աշխարհակարգի մասին հերթական տխուր և վտանգավոր վկայությունն է:

Սամվել Ալեքսանյանը վերստին կարևորեց Իրանում կայունության վերականգնումը, որը տարածաշրջանում հաստատուն խաղաղության ապահովման գլխավոր երաշխիքներից է:

Ադրբեջանի նախագահի վերջին երկու ելույթը (և ոչ միայն) վկայություն են այն բանի, որ այդ երկիրն այդպես էլ չի հրաժարվում Հայաստանի հանդեպ թշնամական հռետորաբանությունից և ծավալապաշտական նկրտումներից. որքան էլ մենք խաղաղության մասին երազանքներ ենք հյուսում և դրանք իբրև իրականություն ներկայացնելու վարժանքներ անում:

Տվյալ հանգամանքն իր հերթին կարևորում է Իրանի դերը տարածաշրջանում հաստատված ստատուս–քվոն պահպանելու գործում, իսկ դրա համար անհրաժեշտ է հարևան Իրանի ներքին կայունությունը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ եղավ նաև «Թրամփի ուղու» վերաբերյալ հայ–ամերիկյան վերջին հայտարարությանը:

Երկուստեք նշվեց, որ փաստաթուղթը մի շարք անպատասխան հարցերի տեղիք է տվել:

Ցանկալի համարվեց համապատասխան մասնագետների ընդգրկմամբ «Կլոր սեղանի» կազմակերպումը՝ մտահոգող հարցերը բարձրաձայնելու, քննարկելու և Հայաստանի, Իրանի ու ՌԴ համապատասխան գերատեսչություններին ներկայացնելու նպատակով:

Պարոն Աբեդինը հանդիպումն ավարտեց Իրանի Իսլամական Հանրապետության հիմնադիր այաթոլա Ռուհոլլահ Մուսավի Խոմեյնիի խոսքով. «Եթե մենք սպանենք կամ մեզ սպանեն՝ միևնույն է՝ հաղթանակը մերն է լինելու»:

«Թրամփի ուղի՝ հանուն միջազգային խաղաղության և բարգավաճման» (ԹՐԻՓՓ) նախագծի՝ Հայաստան-ԱՄՆ իրականացման շրջանակի հրապարակման վերաբերյալ համատեղ հայտարարություն

Սկիզբը՝ էջ 4

- կանխիկ ներդրումներ՝ ըստ անհրաժեշտության:

Երկրներից յուրաքանչյուրը մտադիր է նշանակել բարձրաստիճան պետական պաշտոնյայի՝ որպես ԹՐԻՓՓ-ի իրականացման հիմնական համակարգող, որը պատասխանատու կլինի միջգերատեսչական համակարգման համար և կծառայի որպես ԹՐԻՓՓ զարգացման ընկերության հետ կապի հիմնական անձ:

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

Հայաստանը մտադիր է ԹՐԻՓՓ զարգացման ընկերությանը տրամադրել հետևյալ բացառիկ իրավունքները.

- պլանավորել, նախագծել, զարգացնել, կառուցել, շահագործել և պահպանել բազմամոդալ տարանցիկ ենթակառուցվածքները նախանշված տարանցիկ երթուղիների շրջանակներում,
- ստեղծել հատուկ նշանակության կազմակերպություններ կոնկրետ ենթակառուցվածքային նախագծերի համար,
- պայմանագրեր կնքել շինարարական ընկերությունների, օպերատորների և ծառայություն մատուցողների հետ,
- ստեղծել և գանձել եկամուտներ ենթակառուցվածքային գործողություններից,
- կառավարել ԹՐԻՓՓ երթուղին՝ որպես ինտեգրված համակարգի մաս:

Կառուցապատման իրավունքները կարող են ներառել, բայց չսահմանափակվել հետևյալով.

- երկաթուղային ենթակառուցվածքներ՝ երկաթուղիներ, տերմինալներ, կայաններ, շարժակազմի կառույցներ,
- ճանապարհային ենթակառուցվածքներ՝ մայրուղիներ, ճանապարհներ, կամուրջներ, թունելներ,
- էներգետիկ ենթակառուցվածքներ՝ էլեկտրահաղորդման համակարգեր, նավթատարներ, գազատարներ,
- թվային ենթակառուցվածքներ՝ օպտիկամանրաթելային ցանցեր,
- աջակցող ենթակառուցվածքներ՝ վարչական կառույցներ, կոմունալ ծառայություններ, ապահովության և անվտանգության համակարգեր՝ համաձայն ՀՀ օրենսդրության:

ԹՐԻՓՓ զարգացման ընկերությունը կարող է հավաքել և պահպանել եկամուտներ տարբեր աղբյուրներից, որոնք կներառեն, բայց չեն սահմանափակվի հետևյալով.

- ենթակառուցվածքների հասանելիության վճարներ,
- տարանցիկ երթուղու շրջանակներում առևտրային գործունեություն,
- գույքի վարձակալություն և զարգացում,
- ծառայության վճարներ,
- հատուկ նշանակության կազմակերպություններից ստացված եկամտի բաժիններ:

Հայաստանը հստակորեն պահպանում է.

- օրենսդիր, կարգավորիչ և դատական իրավազորությունը՝ պայմանավորված Հայաստանի ինքնիշխան տարածքում ԹՐԻՓՓ-ի ողջ ծածկույթի նկատմամբ լիակատար ինքնիշխանությամբ և տարածքային ամբողջականությամբ՝ ներառյալ օրենքներն ու կանոնակարգերը կիրառելու իրավասությունը՝ համապատասխան Հայաստանի ներքին օրենքներին և միջազգային համաձայնագրերին,
- ազգային անվտանգության և իրավապահ գործունեության նկատմամբ վերահսկողությունը,
- ԹՐԻՓՓ-ով առևտրի և տարանցման նկատմամբ մաքսային և սահմանային վերահսկողության իրավազորությունը,
- հարկերի, մաքսային տուրքերի և առևտրի ու տարանցման այլ պարտադիր վճարների նկատմամբ իրավազորությունը,
- Հայաստանի ինքնիշխան տարածքում բոլոր հատվածների հասանելիությունը,
- Հայաստանի ինքնիշխան տարածքում տարանցիկ երթուղու մասերում ՀՀ բոլոր օրենքները կիրառելու իրավազորությունը:

ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ակնկալվում է, որ ԹՐԻՓՓ զարգացման ընկերությունը, ԹՐԻՓՓ երկաթուղային և ճանապարհային բաղադրիչներն անմիջականորեն իրականացնելուն զուգահեռ, կստեղծի առանձին իրավական կառուցվածքներ մեծ ենթակառուցվածքային բաղադրիչների համար՝ կախված լրացուցիչ ուսումնասիրությունից և վերլուծությունից: Ակնկալվում է, որ յուրաքանչյուր կազմակերպություն կունենա կառավարման, ֆինանսավորման և շահագործման մոդելներ, որոնք կհամապատասխանեն կոնկրետ ենթակառուցվածքի տեսակին և ռազմավարական նկատառումներին: Բոլոր հատուկ նշանակության կազմակերպությունները սկզբում պետք է հիմնադրվեն ԹՐԻՓՓ զարգացման ընկերության կողմից՝ այն ընկալմամբ, որ մասնավոր հատվածի ներդրումային հնարավորությունները կարող են քննարկվել հետագա փուլերում՝ յուրաքանչյուր դեպքի համար առանձին:

ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Հիմնարար սկզբունքներ

Հայաստանի ինքնիշխանությունն ու իրավազորությունը սահմանային և մաքսային գործողությունների նկատմամբ բացարձակ են և անքննարկելի: Ակնկալվում է, որ սահմանային և մաքսային բոլոր գործունեությունները կիրականացվեն սահմանային կառավարման միջազգայնորեն ճանաչված չափանիշներին համապատասխան՝ պահպանելով օգոստոսի 8-ի հռչակագրի սկզբունքները՝ օգտագործելով «ֆրոնտ օֆիս - բեք օֆիս» (ընդունարան - գրասենյակ) գործառնական մոդելը:

Սահմանների համալիր կառավարում

Հայաստանը մտադիր է շարունակել զարգացնել և ներդնել սահմանների համալիր կառավարման ժամանակակից գործելակերպեր, ինչին ԱՄՆ-ն կարող է աջակցել տեխնիկական օժանդակությամբ՝ ներառյալ.

- ռիսկերի վրա հիմնված ստուգման և մաքսային ձևակերպման ընթացակարգեր,
- զննման ժամանակակից տեխնոլոգիաներ,
- թվային մաքսային և սահմանային համակարգեր,
- համակարգված միջգերատեսչական գործընթացներ,
- Հայաստանի ծառայողների մասնագիտական կարողությունների զարգացում:
- Փորձնական նախագծեր
- Հայաստանը մտադիր է իրականացնել փորձնական նախագծեր օպտիմալացնելու՝
- մաքսային նախնական ձևակերպման ընթացակարգեր,
- թվայնացված փաստաթղթաշրջանառություն և մշակում,
- «մեկ կանգառ» սահմանային կետի հայեցակարգեր,
- տեխնոլոգիայի կիրառմամբ ռիսկերի գնահատում,
- հարևան երկրների հետ համակարգված սահմանային կառավարում:

«Ֆրոնտ օֆիս - բեք օֆիս» գործառնական մոդել

Ակնկալվում է, որ Հայաստանի ինքնիշխանության ու իրավազորության պահպանմամբ ԹՐԻՓՓ-ի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կկիրառվի «ֆրոնտ օֆիս - բեք օֆիս» մոդելը՝ օգտագործելով թվային գործիքներ անխոչընդոտ կապը դյուրացնելու համար:

«Ֆրոնտ օֆիս» (երրորդ կողմ օպերատորներ)

Նախատեսվում է, որ ԹՐԻՓՓ զարգացման ընկերության հետ պայմանագիր կնքած մասնավոր օպերատորները կմատուցեն հաճախորդների առերես սպասարկման ներքոնշյալ ծառայությունները.

- փաստաթղթերի նախնական հավաքագրում ստուգման համար,
- տեղեկատվության և ուղեցույցի տրամադրում օգտվողների համար,
- առևտրի և տարանցման վճարների հավաքագրում և վճարումների մշակում: ՀՀ հարկերը, մաքսային տուրքերը և այլ պարտադիր վճարները պետք է ուղղակիորեն գանձվեն ՀՀ պետական բյուջե՝ համաձայն գործող օրենսդրության և հարկաբյուջետային ընթացակարգերի,
- դյուրացում և համակարգում,
- վարչական աջակցություն:

«Բեք օֆիս» (ՀՀ պետական մարմիններ)

ՀՀ մաքսային և սահմանային պաշտոնյաներն իրացնում են բոլոր ինքնիշխան իրավասությունները՝ համաձայն ՀՀ ներքին օրենսդրության և միջազգային համաձայնագրերի.

- մաքսային վերջնական որոշումներ և ձևակերպումներ,
- անվտանգության ստուգում և իրականացում,
- միգրացիոն վերահսկողություն,
- իրավապահ գործողություններ,
- թույլտվություններ և հաստատումներ,
- զննում և ստուգում:

Հստակ իրավազորություն

- «Ֆրոնտ օֆիսի» օպերատորներն աջակցում են, նրանք չեն որոշում,
- Հայաստանի պաշտոնյաները ֆիզիկական ներկայություն են պահպանում Հայաստանի սահմանային և մաքսային բոլոր հաստատություններում,
- ինքնիշխան գործառույթների որևէ արտապատվիրակում չի իրականացվում:

Մաքսային ընթացակարգեր

Հայաստանը կշարունակի զարգացնել և ներդնել.

- ռիսկի վրա հիմնված ընտրողականություն՝ բեռների ժամանակակից ստուգում՝ կենտրոնացված ֆիզիկական զննումներով,
- տարանցիկ ռեժիմ՝ համապատասխան կնքմամբ և հետագծելիությամբ արդյունավետ ընթացակարգեր տարանցիկ ապրանքների համար,
- նախնական ժամանման մշակում՝ փաստաթղթերի էլեկտրոնային ներկայացում և մշակում,
- «մեկ պատուհանի» համակարգեր՝ առևտրային փաստաթղթերի ինտեգրված հարթակներ,
- ներդաշնակեցված ընթացակարգեր՝ համապատասխանեցում միջազգային մաքսային չափանիշներին:

Անվտանգության գործողություններ

Հայաստանը պահպանում է լիակատար իրավազորությունը Հայաստանի ինքնիշխան տարածքում:

Ենթակառուցվածքային անվտանգության նախագծերը պետք է հաստատվեն Հայաստանի անվտանգության մարմինների կողմից:

Հայաստանի իշխանությունները գերակայություն ունեն բոլոր արտակարգ իրավիճակներում:

Մասնավոր գործառնական անվտանգության աշխատակիցները կարող են ընդունվել աշխատանքի՝ Հայաստանի կողմից լիցենզավորման դեպքում:

Տվյալների համակարգեր և ինքնիշխանություն

Սահմանային և մաքսային կառավարման համար կտեղադրվեն ժամանակակից տեղեկատվական համակարգեր:

Բոլոր կառավարական տվյալների համակարգերը կմնան Հայաստանի ինքնիշխան վերահսկողության ներքո:

Տվյալների փոխանակումն օտարերկրյա մարմինների հետ պահանջում է համապատասխան իրավական շրջանակներ:

Կիբերանվտանգության չափանիշները կհամապատասխանեն միջազգային լավագույն փորձին:

Անձնական տվյալների մշակումը համապատասխանում է Հայաստանի օրենսդրությանը:

Վերապատրաստում և կարողությունների զարգացում

Միացյալ Նահանգները մտադիր է համապատասխան միջոցների առկայության դեպքում նպաստել Հայաստանի սահմանապահ և մաքսային անձնակազմի համապարփակ վերապատրաստմանը և կարողությունների զարգացմանը՝ ներառյալ.

- ժամանակակից մաքսային տեխնիկա և ընթացակարգեր,
- տեխնոլոգիական համակարգերի շահագործում,
- ռիսկերի գնահատում և տեղեկությունների վերլուծություն,
- մասնագիտական բարեվարքություն և էթիկա,
- միջազգային փոխանակման ծրագրեր:

14 ՀՈՒՆՎԱՐԻ, 2026

ՀԱՅԱՍՏԱՆ-ՌՈՒՍԱՍՏԱՆ. ՀԱՅԱՅՔ ԱՆՑՅԱԼԻՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԻՆ

Россотрудничество, АНО «Евразия», Русская Гуманитарная Миссия в 2026 году продолжат поддержку переселенцев из Нагорного Карабаха

Россотрудничество совместно с АНО «Евразия», АНО «Русская Гуманитарная Миссия» продолжают реализацию важного гуманитарного проекта, направленного на помощь семьям переселенцев из Нагорного Карабаха, которые проживают в различных областях Республики Армения.

Благодаря активному распространению информации о помощи среди местного населения, наблюдается увеличение обращений со стороны переселенцев. Чтобы помочь всем нуждающимся, сроки реализации проекта продлены на 2026 год включительно. Для завершения акции в запланированных населенных пунктах будет дополнительно приобретено не менее 2000 наборов для семей с товарами первой необходимости и запасом продуктов и 500 наборов для детей. Помощь получат многодетные и семьи, оставшиеся без кормильца, опекуны, бабушки и дедушки, взявшие на себя заботу о внуках.

«Поддержка переселенцев из Нагорного Карабаха — это не разовая акция, а последовательная работа. Сегодня проект охватывает тысячи семей, оказавшихся в сложной жизненной ситуации. Мы видим, что такая помощь действительно нужна людям, поэтому приняли решение продлить программу на 2026 год и продолжить поставки гуманитарных наборов. Для нас важно не только передать продукты и необходимые вещи, но и дать людям чувство опоры и уверенности в будущем, показать, что в трудный момент Россия с вами», — отметил заместитель руководителя Россотрудничества Игорь Юрьевич Чайка.

Напомним, что на первом и втором этапах проекта в 2025 году было успешно закуплено 7310 гуманитарных наборов и 1000 для детей. На данный момент поддержка оказана более 5000 семьям, около 700 из которых получили дополнительные наборы для малолетних детей. Масштабная акция помощи проходит в рамках проекта «Россия с вами», который рассказывает иностранным гражданам о деятельности нашей страны в сфере содействия международному развитию.

РУССКИЙ ДОМ
16.01.2026

Հայտարարվել է Սիսիան–Քաջարան ճանապարհի հարավային հատվածի շինարարական աշխատանքների միջազգային մրցույթ

«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը հայտարարել է միջազգային մրցույթ՝ Սիսիան-Քաջարան ճանապարհի հարավային հատվածի կառուցման շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով:

Ծրագիրն իրականացվելու է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD) և Եվրոպական ներդրումային բանկի (EIB) համաֆինանսավորմամբ:

Գնումների գործընթացն իրականացվում է EBRD-ի հաճախորդների էլեկտրոնային գնումների հարթակի (ECEPP) միջոցով և այդ հարթակի օգտագործման պայմաններին համապատասխան: Հետաքրքրված մասնակիցները կարող են մուտք գործել հարթակ հետևյալ հղումով՝ https://ecepp.ebrd.com/

Աշխատանքների շրջանակը ներառում է Սիսիան–Քաջարան ճանապարհի հարավային հատվածի 24կմ կառուցում, որը հանդիսանում է Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի մաս:

Մրցույթին մասնակցելու համար մասնակիցները պարտադիր պետք է գրանցվեն ECEPP հարթակում՝ դրա օգտագործման պայմաններին համապատասխան: Միայն գրանցված և գնումների գործընթացին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցները կունենան հնարավորություն՝ ստանալու մրցութային փաստաթղթերը, պարզաբանումները, լրացումները և փոփոխությունները ECEPP համակարգի միջոցով:

Մրցույթի վերաբերյալ լրացուցիչ և մանրամասն տեղեկատվությունը (անգլերեն) հասանելի է հետևյալ հղումով՝ https://ecepp.ebrd.com/respond/YNRVZ2A3HV

//

Մահացել է Սյունյաց աշխարհի մեծանուն զավակ, անվանի ճարտարապետ, պրոֆեսոր Մուրադ Հասրաթյանը

Կյանքի 90-րդ տարում մահացել է հայ անվանի ճարտարապետ, ճարտարապետության պատմաբան, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Մուրադ Մարգարի (Մորուսի) Հասրաթյանը:

Մուրադ Հասրաթյանը ծնվել է 1935 թվականի հունիսի 20-ին Երևանում՝ հայ գիտության և մշակույթի նշանավոր ընտանիքում: Նրա հայրը՝ Մորուս (Մարգար) Հասրաթյանը, պատմաբան-բանասեր էր, Մատենադարանի և Հայաստանի պատմության թանգարանի նախկին տնօրեն, իսկ մայրը՝ Սիրանուշ Մարտիրոսյան-Հասրաթյանը, վաստակավոր մանկավարժ:

1958 թվականին Մուրադ Հասրաթյանը գերազանցությամբ ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը՝ ստանալով ճարտարապետի որակավորում: Նրա ուսուցիչների թվում էին հայ ճարտարապետության խոշորագույն ներկայացուցիչներ Ռաֆայել Իսրայելյանը, Սամվել Սաֆարյանը, Վարազդատ

Հարությունյանը, իսկ դիպլոմային աշխատանքի ղեկավարն էր Միքայել Մազմանյանը:

Մասնագիտական գործունեության առաջին տարիներին նա աշխատել է «Երևաննախագիծ» ինստիտուտում՝ Գևորգ Թամանյանի արվեստանոցում: Նրա նախագծերով Երևանում կառուցվել են բնակելի և վարչական շենքեր, դպրոցներ, այդ թվում՝ Շիրվանզադեի անվան թիվ 21 դպրոցը, ինչպես նաև մշակվել են Լուկաշինի անվան սովտնտեսության և Քանաքեռ-ՀԷԿ-ի բնակելի ավանների հատակագծերը:

1964 թվականից Մուրադ Հասրաթյանը իր գիտական գործունեությունը շարունակել է ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում՝ զբաղեցնելով տարբեր պատասխանատու պաշտոններ: 1988 թվականից նա ղեկավարում էր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժինը: 1993 թվականին արժանացել է ճարտարապետության դոկտորի գիտական աստիճանի, իսկ 2003 թվականին ստացել է պրոֆեսորի կոչում:

Մուրադ Հասրաթյանը չափագրել և ուսումնասիրել է շուրջ 150 ճարտարապետական հուշարձան՝ դառնալով հայկական միջնադարյան ճարտարապետության ուսումնասիրության առանցքային դեմքերից մեկը: Նա առաջինն է գիտականորեն ուսումնասիրել և փաստագրել Լեռնային Ղարաբաղի բազմաթիվ հուշարձաններ՝ Ամարաս, Դադիվանք, Գանձասար, Ղազանչեցոց տաճար և այլ արժեքավոր համալիրներ: Նրա չափագրությունները հաճախ դարձել են ավերված հուշարձանների գոյության միակ վկայությունը:

Մուրադ Հասրաթյանը մեծ ներդրում ունեցավ Սյունիքի ճարտարապետական համալիրների ուսումնասիրման գործում: 1969 թ. նա պաշտպանեց դիսերտացիա՝ «Սյունիքի XVII-XVIII դդ. ճարտարապետական համալիրները» երկու թեմայով և ստացավ ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճան:

Գիտնականը հեղինակել է շուրջ երկու տասնյակ գրքեր, հարյուրավոր հոդվածներ, մասնակցել է հայ ճարտարապետության պատմությանը նվիրված հիմնարար աշխատությունների ստեղծմանը: Նրա աշխատանքները հրատարակվել են Հայաստանում և արտերկրում՝ ռուսերեն, ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն լեզուներով:

Մուրադ Հասրաթյանը եղել է Հայաստանի ինժեներական ակադեմիայի անդամ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ճարտարապետության միջազգային ակադեմիայի թղթակից անդամ: Արժանացել է բազմաթիվ պետական և մասնագիտական պարգևների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի (2009):

Մուրադ Հասրաթյանի մահը մեծ կորուստ է հայ մշակույթի, գիտության և ճարտարապետական ժառանգության պահպանման համար:

//

Սյունյաց Երկիր
ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ – ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: ® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ-ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝ 0074, Երևան, Բագրատունյաց փող., 70ա շենք

Ծավալը՝ 3 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1010, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 29.01.2026թ.: